

ՑԵՐԵՆԻ Թ. ՇԵՎԵՐԵՆԻ

# ՀԱՅՈՒԹՅՈՒՆԻ ՏՐԱՎԵՐՏԻՆ

բարեկամության համար կազմակերպություն

## Տպարան Ա. Ամենափրկչ. Վանքի


1914

ՏԻԳՐԱՆ Թ. ԱՐԴՅՈՒՆՆԱԾ

# ՆՈՐ-ԶՈՒՂԱՑԻ

## ԳՊՐՈՑՆԵՐԸ

(Համեմատական համառուսական լիբրետութեամբ)



ՆՈՐ-ԶՈՒՂԱ

Տպարան Ա. Ամենափրկշեան Վանքի

1914

## ԲԱՎԱՆԳԸԿՈՒԹԻՒՆ

Ա.

Նոր-Զուլայի առաջին դպրոցը, ծաղիքը եւ լեբացաւառները.—Մովսէս առաջնորդի աւելացրած դպրոցները.—Ազա-Պետրոս Ասկանեանի եւ Զօգեփ Ա. օլժի հիմնելիք դպրոցները.—Գր. Սամեանի եւ Քուռ. հաստատած դպրոցները. 3—8 էջ:

Բ.

Ցարութիւն Աբգարեան, կենսագրութիւնը եւ հիմնած դպրոցը. — Ցովիսննես Մաւրեան առաջնորդի հաստատած նոգեւու դրաբոցը. — Ա. Միևսա եկեղեցաւմ բացուած առաջին դպրոցը. 9—11 էջ:

Գ.

Ազա - Դեօգ Մանուկեան, օ. Մարիամ Ցարութիւնեան, օրդագուհի Մանուկեան, նուոց կենսագրութիւնը եւ հիմնած դրաբոցը. 12—16 էջ:

Դ.

Մարգար Մուշեանեանի հիմնած դպրոցը. — Ազա - Կարապետ Մասուֆեանի հիմնելիք դպրոցը. — Դեօգ Ցովիկեան դպրոցը. — Խալիթյան դպրոցները. — Ազգ. Կեդրոնական դպրոցը. 17—19 էջ:

Ե.

Մանուկ Ցուղանեանեան, կենսագրութիւնը եւ հիմնած օրինաց դպրոցը. — Ազգային դպրոցների միաւթիւնը. — Ա. Կատարինեան դպրոցի կառուցումն եւ 50-ամեայ յոթելեանը. 20—29 էջ:

Զ.

Հայ-Կարթիկաց Ս. Գր. Լուսաւորիչ դպրոցը. — Էազարիս հայրենի հիմնած դպրոցները. — Բողոքական միսիսաւորեան դպրոցները. 30—32 էջ:

Է.

Գեղարկ Քանանեանի կենսագրութիւնը. — օ. Գ. Քանանեանի

հիմնած Գ.-Քանանեան դպրոցը.—Վեհ. Հայրապետի կոնդակը.—Դամակեթի Յովնանեան դպրոցը. 33—47 էջ:

Ը.

Մայակիա առաջնորդի հիմնելիք Հոգեւոր դպրոցը.—Հոգաբարձութեան ձեռնարկած զիշերօրիկ դպրոցը. — Ս. Ամենափրկչ. զիշերօրիկ Հոգեւոր դպրոցը.—Հնդկաճայերի ծրագիր Ազգ. Կեդր. դպրոցի մասին. 48—50 էջ:

Թ.

Հոգաբարձութեան ձեռնարկած Արհեստագիտական դպրոցը.—Աբգար եւ ընկերութեան հաստատած Արհեստ. դպրոցը եւ Ողորմութեան Աւանդիները. 51—53 էջ:

Ժ.

Բիթանական եւ Արտամին Աստուածաշնի թնկերութեան գրավաճառանոցը.—Ազգ. Կեդրոնական գրավաճառանոցը. 54—55 էջ:

# ՆՈՐ-ԶՈՒԴԱՅԻ ԳՎՐՈՑՆԵՐԸ

«Առաւոս կանուխ Հայի երեխայի  
Դպրոց են վազում զուարք ու արագ,  
Հյու, ուշադիր սովորում են համար,  
Պատրաստում աննիւր զանձ ազգի համար:  
Բրամիս տղայ Հայ օս's տեսած կամ,—  
Խնչ է մեզ պակաս»:

Գ.Ա.Մ.Ս.Ո.—ՔԱ.Թ.Ի.Պ.Ա.

Ա.



ՍՈՐ-ԶՈՒԴԱՅԻ ՀԻմ-  
նարկութեան տարիներից սկսած ունե-  
նում է գպրոց: Առաջին գպրոցը հիմ-  
նըւում է Ամենափրկչեան Ս. Վանքում  
և առաջին ուսուցիչը լինում է նայն  
վանքի առաջնորդ Խաչատուր Կեսարա-  
ցին: Սրան ից յետով, միմեանց յաջորդում  
են ուսուցչութեամբ Դաւիթ և Ստեփան-  
նոս եպիսկոպոսները և Կոստանդ գպիրն:  
Վերջինիս ժամանակուայ աշակերտների  
թիւը հստնում է 250-ի: Սրա ժամանակը նոր—Զուղայի  
ոսկեդարն է լինում վաճառականութեան տեսակէտից, ուս-  
տի երեսելի իշխաններն ու վաճառականներն անհրաժեշտ են

Համարում իրենց երեխաների համար գրագիտութիւնը: Նբանք բաւականանում են միայն հասարակ գրել-կարդալ, թուաքանութիւն և վաճառականական խրատներ ուվարեցնելով:

Սոյն Կոստանդ վարժապետը 1687 թուին հրատարակում է «Աշխարհաժողով» կոչուած մի գիրք, որի մէջ կան զանազան նիւթերի մասին գրուածքներ՝ թուաքանութիւն, վաճառականական խրատներ, Ազարիալի թուականի զործածութիւնը և այլն խառն նիւթեր: Յառաջ բերենք մի փոքրիկ նմուշ վաճառականական խրատներից:

«Մի երթիցիս միայն ի ճանապարհ Անփորձ և անճանանչ ընկերի հետ մի նստիցիս և մի քնիցիս, գուցէ սպանցէ զքեզ և առցէ զինչս քու Պաշարն ի տաշտէդ առ ընկերն ի տանէդ: Քաղաքն ի ծոցդ պահեամ, զրիչ-զամբարն ի ջուրդ պահեամ: Վանթարն ի թամբաւլիթ, կշիռն իւր զրամներովն ի սխտեանդ: Կիսագազն ի գօտիդ, խելքդ ի զլուխդ, միտքդ առ Աստուած: Ինչ Աստուած շնորհեացէ քեզ, նովաւ շատացիր . . . : Անփորձ մարդոյ ամանաթ մի տար: Զամնայն առ և տուրդ գրեամ և էսօրէն վազն մի ձգիր»: \*)

ՖԶ-րդ գարում նոր Զուղալի Ամենափրկչեան ս. Վանքի սոյն դպրոցը իր զիտական բարձրութեամբ մի լուսատու փարոս է լինում Հալութեան համար: Իր ուղղութեամբ ու ծրագրով մեծ օգուտ է տալիս թէ մեր խզնուկ գրականութեան և թէ ընդհանուր ազգին, տալով անձնուէր, խելացի և գիտնական հոգեսրականներ՝ առաջնորդներ ու կաթուղիկոսներ: Այս դպրոցի աշակերտներից են լինում Ամենափրկչեան ս. վանքի մի քանի տառաջնորդները, Յովհանն «տէեզերալոյս» կոչուած ժամանակի ամենագիտնական

\*) Յ. Տէր Ցովհանեանի «Պատմ. Ն.-Զուղալու» Բ. էջ 253:

գարդապետը. որ բազմաթիւ գրաւոր աշխատութիւններ ունի, Աստուածատուր վարդապետը, որ Կ. Պօլիս գնալով, պատճառ է լինում այստեղի գրական շարժման, Ստեփաննոս ու Ռոկան վարդապետները, որսնք մեծ ջանք են թափում Հալկական տպագրութեան գործում։ Վերջապէս այս դպրոցի աշակերտներից են լինում և Միմէօն, Աղէքսանդր ու Յակովը՝ կաթուզիկոսները։ \*)

---

1710-ական թուականներին Մովսէս առաջնորդն աւելացնում է և ուրիշ երկու դպրոցներ, մէկն Մուրագեանց ու Յակովայ Եկեղեցում և միւսը ու Ստեփաննոս եկեղեցում, որոնց մասին ոչ մի տեղեկութիւն չկայ։

---

1750 թուին Հնդկաստանի Մագրաս քաղաքի բնակիչ տղա-Պետրոս Ռոկանեան Նոր-Զուղալեցի երեելի իշխանն 26,500 ռուփի է կտակում Նոր-Զուղալի մէջ մի դպրոց հիմնելու, ուր պիտի դասախոսուէր հալերէն, պարուկերէն և լատիներէն։ Մական այն ժամանակուալ թէ Հնդկաստանի և թէ Պարսկաստանի խառն հանդամանքները արգելք են հանդիսանում բարերար ազալի նպատակը իրագործելու։

---

1825 թուին պլ. Զօգէփ Վօլֆ անունով մի անգլիացի գալով Նոր-Զուղա, կամենում է իր ծախքով մի դպրոց բանալ, յատկապէս հայ երեխաններին կը թուլթիւն և լուսաւորութիւն տալու, սակալն սրա բարի դիտաւորութիւնն ևս խափանւում է քաղաքական ինչ ինչ աննպաստ հանդամանքների շնորհիւ։

---

\*) «Բազմապէղ» 1904 թ, էջ 361։

1833 թուին, Մագրասաբնակ պլ. Գրիգոր Սամեան երեելի վաճ սուականը 20,000 ռուփի է կտակում նոր—Զուղարտմ իր անունով մի դպրոց Հիմնելու: Յաջորդ տարսում հաստատում է դպրոցը Ամենափրկչեան և վանքի ծոցում (նախկին դպրոցի տեղը) և ժամանակաւոր ուսուցիչ կարգում Յակովը ծ. վարդապետը: Մի քանի ամսից յետոյ Յովհաննէս Բ. առաջնորդի հրաւերով ո. Եջմիածնից գալիս է յարտնի զիտնական Մեսրովը Թաղիսգեանը որպէս ուսուցիչ նոյն դպրոցի: Սա երկու տորի միայն մնալով պաշտօնում՝ հրաժարում է, իսկ դպրոցը մի առ ժամանակ ևս կուղէ-կաղ կառավարուելով 1833 թուին փակման դատապարտում:

1840 թուին, պլ. Յովհաննէս Մ. Զորարեանի ջանքերով կրկին բացում է նոյն Սամեան դպրոցը Ս. Ստեփաննոս եկեղեցու գաւթում և իր գոյութիւնը շարունակում է մինչև 1853 թիւը, երբ Սամեան առևտրական տունը սնանկանում է և դպրոցին լուսացրուած 20,000 ռուփին ևս կորչում մէջտեղից:

1841 թուին պլ. Բոռի անունով մի ֆրանսացի է գտիս նոր Զուղա և հայերէն, պարսկերէն ու ֆրանսերէն լեզուներ սովորեցնելու դիտաւորութեամբ մի դպրոց է բաց անում, ուր կարճ ժամանակում բաւականաշատ տշակերտներ ևս հաւաքում են: Սակայն գժտութիւն ծագելով լուսաւորչական և կաթոլիկ հայերի սիջեւ, Խաչատուր առաջնորդը լեռ է կոչում ո. Եջմիածին և պլ. Բոռին ևս ստիպւում է փակել դպրոցը և հեռանալ Պարսկաստանից:



1795 թուին Նոր — Զուղայում տիրող Հայրստահարութիւններից և Հայերի կրած տառապանքներից խապառ ձանձրացած, 16 տարեկան մի պատաճ ի թողնում է ընդ միշտ իր հայրենի տունը և ձեռք տանում պանդխութեան գաւազանը։ Այս պատանին Աբգարեանց տոհծի նախահայր՝ Աբգարի երկրորդ որդի Յարութիւնն է լինում, ծնուած նոր Զուղայում 1779 թուին։

Հասնելով Բուշեր, մի առ ժամանակ մնում է այնտեղ և գոհանում մանր առևտով։ Յետոյ տեղափոխում է Բօմբէլ և մի հայ վաճառականի մօտ ծառայութեան մտնում։

Յարութիւն Աբգարեանը ի ընէ խոհեմ և աչալուրջ մէկն լինելով, լաջողում է իր հաւատարիմ և տոկուն ծառայութեամբը սիրելի դառնալ նոյն վաճառականի աչքում և զրաւել նրա ջերմ համակրութիւնը։

Ժամանակի ընթացքում, հետզհետէ ծանօթանալով Զինաստանի և Մանիլայի վաճառականութեան հետ, իրեն հովանաւորող վաճառականի մահից յետոյ ինքը Յարութիւնն է լառաջ տանում նոյն գործը և սրբաւում նոյն առևտրական տան շարունակութիւնը։

1808 թուին իր փոքրիկ եղբայր Գրիգորին ևս տանում է մստը Բօմբէլ և միացնում իր գործին։ Իսկ 1830 թուին տեղափոխում է Կալկաթա և Հիմնում այժմեան «Աբգար և Ընկ.» լայտնի առևտրական հաստատութիւնը։

Յարութիւն Աբգարեանը իր ժամանակին բացի նշանա-

որ հայ վաճառական լինելուց, իր բեղմնուոր կեանքի ամբողջ ընթացքումը ներկայանում է որպէս մի առաքինի մարդու և օրինակելի քրիստոնէի տիպար, բաւիս իսկական նշանակութեամբ։ Նրա գուուը բաց է լինում բոլոր իրեն գիտողների, բոլոր հայ կարօտաւորների առաջ, մանաւանդ իր հայրենակիցների, որոնք դժբախտաբար հարկադրուած էին լինում լքել իրենց տունն ու ընտանիքը նոր-Զուզայում և գիմել Հնդկաստան պանդխտութեան։<sup>1)</sup>

Յարութիւն Աբգարեանը չէ մոռանում նաև իր ծննդավարի՝ Նոր-Զուզայի Մէլքան թաղի ո. Աստուածածին եկեղեցին, աւր մկրտուել էր և անց կացը իր մանկութեան ուկի ժամերը, և պողբերաբար նպաստում է նրա նորսգութեանն ու բարեզարդութեանը։

1843 թուին տղա-Յովհանջան Ելիասեանի աջակցութեամբ, Յարութիւն Աբգարեանը լիշեալ եկեղեցու բակումը հիմնում է «Հայկեան հայ ենասիրական» անունով մի դպրոց, որպէսզի Նոր-Զուզայի հայ պատանիները բոլորպին անկիրթ չմնան, այլ գոնէ միջոց ունենան փոքր իշատէ ծանօթանալու կրօնագիտութեան, տարրական թուաբանութեան և հայերէն ու պարսկերէն լեզուների հետ։

Սոլն դպրոցը ուզիղ քառասուն տարի որպէս առանձին հասաւասութիւն, իր գոյսութիւնը պահպանում է և մի քանի սերունդ գրագէտ աշակերտներ արտագրում, Արա գրան ճակատին մինչև մեր օրերը մնացած յուցանակի վերտառութիւնն է։

«Ով ոք կամի աշակերտիլ ի սմա,  
ի բերանոյն հետի առնէ զտառ Զառ»

Յարութիւն Աբգարեանը մեռնում է 1863 թուին 84

1) Մեսրոպ Սէթեանի «History of the Armenians in India» էջ 127.

տարեկան հաստկում և թաղւում Կալկաթայի Հայոց Նազարէթալ և եկեղեցում

---

1844 թուին Յովհաննէս Սուրէնեան առաջնորդը մի հոգեոր դպրոց է բաց անում, այն յուսով, որ Ամենափրկչեան և վանքի միջոցներով և այլ պատահական նպաստներով կարող պիտի լինի կառավարել։ Սակայն հաստատուն եկամուտ չունենալուն պատճառով, երեք տարի միայն դժուարութեամբ պահուելուց յետոյ՝ փակւում է։

---

1847 թուին Բատաւիաբնակ մի տնյալտ բարերարի նուիրաբերութեամբ Նոր-Զուղալի Դաւրէժ թաղի և Մինաս եկեղեցու գաւթումը մի դպրոց է բացւում ընդ գաստիարակութեամբ Տէր-Գարբիէլ քահ։ Տէր-Միքալէլեանի, որ և կարճ միջոցից յետոյ էլ փակւում է։<sup>1)</sup>



<sup>1)</sup> «Ազգասէբ» 1847 թ. № 89:



Ժ.Ը.-րդ դարի սկզբներում, Նոր-Զուշալից Զաւա գաղթող հայերի մէջ նըշանաւոր դիրք է գրաւում աղա-Գէորգ Մանուկեան (Մանիչարեան) յայտնի վաճառականը, որ ժամանակի յաջող հանգամանքների շնորհիւ, մեծ հարստութեան է հասնում և Հոլանդական կառավարութեան աչքում մեծ հոչակ վայելում։

Աղա Գէորգը որբացած երկու մանկահասակ քոյր է ունենում Նոր-Զուշալում Մարիամ և Թագուհի անունով, առաջինը 14 տարեկան, երեսորդը՝ 10 տարեկան։ Եղբայրը 1795 թուին այս երկու քոյրերին տանում է Հնդկաստան և բնակեցնում Մադրաս քաղաքում։

Մի քանի տարուց յետով, Մարիամն ամսւանանում է Յակովը Յարութիւնեանի հետ, որ և յետոյ իր տիկնոջ՝ Մարիամի և օր. Թագուհու հետ միասին տեղափոխւում են Զաւա աղա-Գէորգի մօտ։

Աղա-Գէորգն իր բարեգործութեամբ ևո յայտնի անձնաւորութիւն է լինում ժամանակին։ Նա ի թիւս բազմաթիւ և բազմապիսի բարեգործութիւնների, մտադիր է լինում Լոնդոնի մէջ մի «Ազգային համալսարան» կառուցանել, որի իրականացման համար մի միլիոն ռուփի յատկացնելով, քառորդ գումարը փոխադրում է Լոնդոն և ասլահովեցնում է ալնտեղ Կառավարակուն դրամատանը, մինչեւ որ գործը սկսուի և մնացած գումարն ևս հետզհետէ փոխադրուի։ Սակայն

1827 թուին անագորոյն մահը վրայ հասնելով ամբողջ ծրագիրը տակն ու վրայ է անում:

Գէորգ Մանուկեանն իր մահից առաջ պատրաստում է և թողնում մի կտակ, որով հետեւեալ հիմնարկութիւններին և ո մասն է հանում իր ճոխ հարստութիւնից, այսպէս:

Թուփի

Երւսաղէմի Հայոց ս. Յակովքայ վանքին	10,000
Կալկաթալի Հայոց Մարդասիր. Ճեմարանին	30,000
Մագրասի Հայոց գլուզին	30,000
Նոր-Զուղալի Ամենափրկչեան ս. վանքին	10,000
Ն.-Զ.-ի ս. Կատարինեան կուսանաց վանքին	5,000
Ո. Եջմիածնի Մալր Աթոռին	25,000

ընդամենը՝ 110,000 ս.

Վերջին գումարի տոկոսները երջանկալիշատակ Գէորգ Գ. կաթուղիկոսը լատկացնում է իր հիմնած Գէորգեան Ճեմարանին: \*)

Աղա-Գէորգը անժառանգ լինելով, նրա մահից լետոյ հարստութիւնը հասնում է երկու քոյրերին՝ տ. Մարիամին և օր. Թագուհուն: Սրանք ևս իրենց հանգ. եղբօր բարի օրինակին հետեւելով, ազգամիբական և բարեգործական տռատաձենութեամբ տռաջինն են լինում ամբողջ Զաւալում: Առանձին գութ և խնամք են տածում դէպի կարօտաւորները, անանկներն ու պանդուխտները, որոնց համար իրենց տունը գարձնում են ուղղակի ապաստանարան:

Թէպէտե մանուկ հաստկում էին թողել իրենց ծննդավայրը՝ Նոր-Զուղան, սակայն ալնքան զօրեղ և ջերմ է լինում նրանց սէրը գէպի իրենց հայրենիքը, որ Նոր-Զուղայում այն ժամանակները պատահած ամեն մի դժբախ-

\*) «Արտիատ» 1876 թ. № 9:

տութեան լուր խոցում է նրանց սիրտը, մինչ այն աստիճան, որ նստում լոլիս են անմխիթար: Ասելով որ իրենց հայրենական տունն, ուր ծնուել ու սնուել են, ձախող հանգամանքների շնորհիւ ընկել է պարսիկների ձեռքը, շատապում են արժէքը փոխադրել, գնելու նոյն տունն և ընծալելու իրենց թաղի՝ Երևանի ո. Սարգիս եկեղեցուն, Սուկայն այս ցանկութիւնը մնում է միայն ցանկութիւն ենոյն տունը մինչև մեր օրերը մնում է օտարազգի ձեռքում:

Վերին աստիճանի կրօնասէլ և բարեպաշտ լինելով 1854 թուին Բատութայում իրենց ծախքալ կառուցանում են ո. Յովհաննու եկեղեցին, ուր ամեն կիրակի և տօն օրերին մի առանձին ջերմեռածնդութեամբ լուճախում են մասնակցելու Հայաստանեալց ո. եկեղեցու ժամերգութեանն ու պատրագին, այն եկեղեցու, որի ամեն մի ծէսն ու կանոնը նուիրական են համարում և նրանց ճշտիւ կիրառութեանը խիստ բծախնդիր լինում: Եւ որպէսզի սոյն եկեղեցին իրենցից լետոյ ևս շարունակէ իր գոյութիւնը և Զաւարենակ Նոր—Զուղալեցի հայերն մի ազգային տուն, մի հանգըռւան ունենան, իրենց հոյակապ տունը նուիրաբերում են նոյն եկեղեցուն, որի եկամտովը մինչև մեր օրերը նախանձելի վիճակում սլահպանուել է և պիտի պահպանուի Զաւայի և շրջակայ կղզիների ցրուած հայերին մի հօտ դարձնող միակ հայկական հաստատութիւնը՝ Բատաթալի ո. Յովհաննու եկեղեցին: Բացի սրանից, Նոր—Զուղալի եկեղեցիներից շատերն ևս նորոգուել ու բարեզպարգուել են դարձեալ այս երկու քոլըների նուիրատուութեամբ ու նպաստներով:

Դրամական մեծ զոհաբերութեամբ նպաստում են Զաւալում հաստատուած «Հայկեան Միաբանութեանն», որի նպատակն էր Զաւալում գտնւող պանդուխտ հայերին ընդ-

հանրապէս, իսկ Նոր-Զուղայեցիներին մասնաւորապէս խնամել ու հոգ տանել, ինչպէս և նքանց որը ու չքաւոր երեխաներին կրթութիւն մատակարարել, նաև նոր Զուղայի «Աղքատաց Արկղ» ընկերութեանն, որի շնորհիւ ցաբդ բազմաթիւ տեղացի և գաւառացի չքաւոր ընտանիքներ խնամուել են ու խնամւում:

Կրթութիւնից զուրկ սովոր երկու քոյլերն, որոնք հազիւթէ գլազէտ կարող եին համարուել, հիանալի կրթասիրութեամբ են վերաբերում գէպի հայ մամուլն ու գրականութիւնը: Բաժանորդ են գրում իրենց ժամանակի ըստ հայ թերթերին և մեկենաս հանդիսանում Հնդկաստանի մէջ լոյս տեսած շատ հրատարակութիւնների: Այսպիսով նպատակ են ունենում նախ, քաջալերել Հայոց հրատարակչական գործը և երկրորդ, բարի օրինակ ծառայել այն հարուստ Հնդկահայերին ու Զաւահայերին, որոնք ամեն բանի համար պատրաստ եին փող ծախսել, բացի գիր ու գրականութիւն տարածման գործից: \*)

Զաւահայ գաղութի մէջ Հայ բարբառի յարատեսութիւնն իրենց կէտ նպատակ ունենալով, 1855 թուին Բատաւիայում բաց են անում «Մանուկ և Յարութիւն» անունով մի գպրոց, որի համար գնում են 120,000 ռուփի արժողութեամբ մի կալուածք և նուիրում մի տուն: Այս գպրոցն շարունակում է մինչև 1872 թիւը, երբ համայնքի անտարերութեան պատճ ուռով ընդ միշտ փակում է և մինչեւ օրերը Զաւահայ գաղութը զրկուած է մնում հայկական գպրոց ունենալուց:

1853 թուին երկու քոյլերը կամենալով գէպի Նոր-Զուղատան ունեցած իրենց բուռն հալենասիրութիւնը մի որ և է

\*) Գ. Գոսպարեանի «Լենսագր. երկուց բարեպարաց» էջ 5:

իլշատակով լաւէրժացնել, առաջնորդ Թագքէսս արքեպո-  
քէկնազարեանի միջոցով մի դպրոց են հաստատում նուե  
Նոր-Զուղարի Դաւրէժ թաղի ս. Մինաս Եկեղեցումը, որ ու-  
ղիղ երեսուն տարի իր գոյութիւնը պահպանում է որպէս  
առանձին դպրոց և տարբական ուսումն աւանդում իրեն  
ապաստանող աշակերտութեան:

Օր. Թագուհին վախճանւում է 1856 թուին 71 տարեկան հաստիում, իսկ տ. Մարիամը 1864 թուին 83 տարեկան:





Պ.

1840-ական թուտկաններին Զաւայում  
գտնվող Նոր-Զուղալեցի հայ վաճառական-  
ների թւում յառաջադէմ է լինում և Մարգար Սու-  
քիսսեանը, որ նշանաւոր կալուածատէր է լինում  
Զպարայում:


Սա նոյնպէս իր բարեգործութեամբ յայտնի անձ-  
նաւորութիւն է լինում ժամանակին և 1853 թուին  
առաջնորդ Թագդէսս արք-եպիսկոպոսի յորդուներովը մի  
գպրոց է բաց անում Նոր-Զուղալի Յակովիջանեանց թա-  
զի և Ստեփաննոս հկեղեցու բակումը (Սամեան գպրոցի տե-  
ղը), որ նոյնպէս երեսուն տարի պահպատմ է որպէս առան-  
ձին գպրոց և ժամանակի պահանջներին համապատասխան  
կըթութիւն մատակարարաւում:

1854 թուին ԹէՀրանտաբակ Ալէքսանդրապոլիցի ազա-  
կարապետ Սառաֆեանց վաճառականապետը առաջնորդ Թագ-  
դէսս արք-եպիսկոպոսին տուած մի գրաւոր խոստման հա-  
մաձայն, վիավագ է լուլտնում հազար թուման կտակել Ամե-  
նափրկչեան ս. վանքում 12 որդեգիր երեխաների համար  
մի գպրոց բանալու, ուր պիտի աւանդուէին հայերէն, պարս-  
կերէն, ուուսէրէն, և Փրանսերէն լեզուներ: Այս խոստում-  
նագիրը հաստատում և վուերացնուում է ԹէՀրանի Ռուս-  
դիսպանատան կնքով և յանձնուում Ամենափրկչեան ս. վան-  
քին: Սակայն կարճ միջոցից յետոյ աղա-Կարապետը սնան-  
կանում է և խոստումը մնում միայն խոստում:

1867 թուին Հնդկաբնակ ա. Շաղիկ Յովսէփեանը (Շաղիկ-խաթռուն) Նոր-Զուղալի ա. Յովհաննաւ եկեղեցու սրտհումն իր հանգ ամսուսնու յիշատակին մի գպրոց է բաց անում «Գէորգ Յովսէփեան» անունով, որ հինգ տարի միտյն տեղուց յետով 1872 թուին փակում է, Արովհետեւ բողոքական միսիոնարները Անգլիերէն յեզուի համար միանալով սոյն գպրոցի հետ, ձգտում են կամաց-կամաց տէր գտնալ և գպրոցը ծառալիցնել իրենց նպատակին: Այս անախորժութիւնների գէմ բողոքներ են գրւում Հնդկաստան դըպրոցի հիմնադրին, որ և նկատելով իր լուծաների չարաշտը գոլծադրութիւնը, գագարեցնում է գրամի առաքումը:



Բացի յիշեալ գպրոցներից, զահազան ժամանակներում, մասնաւոր քահանաների աներում ևս լինում են Փոքրիկ խալիքական գպրոցներ, ուր ուսումնածարաւ երեխաները լաճախում են փոքր ի շատէ գրել-կարդալ և եկեղեցական փոխեր սովորելու: Սակայն խեղճ աշակերտները աւելի ծառալի պոշտոն են կատարում, քան գպրոցական աշակերտի: Ամբողջ օրերով «վտրպետի» համար են միտյն ոշխատում, ալդին ջրում, խոտ հնձում, պտուղ հաւաքում և փողոցները ընկած վաճառում, տունը աւելում, կերակուր պատրաստում, երեխայ պահում ու քննեցնում, իրեր բազանիք տանում և այլն: Իսկ այս բոլորից յետով, հազիւ թէ գրագէտ կոչւելու չափ ուսումն ստանում: \*)



1880 թուին առաջնորդ Պրիգորիս արք-եպս. Յովհաննիսեանի նախաձեռնութեամբ և Ամենափրկչեան ա. վանքի

\*) Սոյն գպրոցների երեխներն են Տէլ-Մատթէոսեանց ու Տէլ-Մարգարենց:

միաբան՝ Նոր—Զուզայեցի Խաչատրւի վարդապետ Կարապետեանի ջանացողութեամբ՝ Նոր—Զուզայից, Հնդկաստանից, Բըմաստանից և Զուտալից Հանգանակած գումարներով, Նոր—Զուզայի Զարսու թաղումը հիմնարկւում է մի դպրոց, որի վիթխարի շինութիւնը մասոմբ աւորտուելուց յետով, 1883 թուի Յունվարի 1-ին, արգեն գոյութիւն ունեցող երեք դպրոցները, այն է՝ Մէլգոն թաղի ո. Աստւածածնի եկեղեցու Յարութիւն Որդարեանի հիմնած «Հայկեան Հայրենասիրականը», Պուրէժ թաղի ո Մինաս եկեղեցու տ. Մարիամ Յարութիւնեանինը և Յակովլչանեանց թաղի ո. Ստեփաննոս եկեղեցւ Մարգար Սուքիասեանինը Փակուելով միացւում են սոյն նորակառաց դպրոցի հետ և կոչւում «Ա.Զ.-Գ.Ա.Յ.Ի.Ն.Ս.Կ.Ա.Ն ԳՊՐԱՑ»: \*)

Ապա Գրիգորիս արք-Եպիսկոպոսը ներկայանալով Հայսէր Նասէլ է գդին. Եահին, տարեկան 100 թումանի մօստամարի է Հաստատել տալիս Աեգրունական դպրոցի Համար, իսկ Խաչատրւը վարդապետը՝ Փէրիտ գաւառով իր սեպհական Զիգան գիւղն ընձայում, որի մասին յետով գատ բացուելով, կէսն է միայն մնում դպրոցին:



\*) «Սասիս» 1883 թ. Մայիս 21:

# Ե.



1800 թուականին Նոր-Զուղայում մի չքաւոր ընտանիքում ծնուռմ է Մանուկ Յորդանանեանը: Նրա ծնողները աղքատ էին և գժուաբութեամբ ձեռք բերում իրենց օրական պարէնը՝ ջուլհակութեան արհեստով: Մանուկը իր պատանեկութեան օրերը անց է կացնում Նոր Զուղայում, հօրն օգնելով նրա պարապմունքների մէջ և պատրաստում հօրից յետով շարունակելու նրա արհեստը՝ ջուլհակութիւնը:

Այս ժամանակները Նոր-Զուղայի այն շրջանն էր, երբ Ֆաթալի-Շահը ժառանգելով պարսից գահը, թէե վերջ էր տուել իր նախարարների օրով լատկապէս հայերին տանչելու համար ստեղծուած մի շաբք հարստահարութիւններն ու կեղեքումները, թէե բանութեան ճիրաններում խոշտանգուած Նոր-Զուղայի սակաւաթիւ հայերը սկսել էին կամաց-կամաց շունչ քաշել և իրենց արդար զատակի տէրը գտանալ, սակայն գժբախտաբար բռնութեան թողած պակասը բնութիւնն է շտապում լրացնել:

1815 թուին վրայ է հասնում «Սադրի» կոչուած սովը, որ ամբողջ երեք տարի է տեսում: Այս ժամանակամիջոցում, չքաւորութիւնն այն աստիճան հալում, մաշում է Նոր-Զուղայեցի հայերին, որ նրանց ուղղակի օրուայ հացի կարօտ է գարձնում:

1816 թուին տեղի է ունենում «Զամբօռների» կոչուած կորիւը, որ նոյնպէս բաւական թանգ է նստում Նոր-

Զուղալի հայերին:

Ահա այսպիսի մի դառն ժամանակ 18 տարեկան Մահական Յորդանանեանը երկար վարանումից յետոյ, վճռում է օտարութեան մէջ բախտ օրսնել և թողնելով իր դժբախտ ծննդավարը, դիմում է պանդխտութեան:

Նո գնում է ուղղակի Զաւա, ուր ա. Մարիամ Յարութիւնեանի եզրալը՝ աղա-Գէորգ Մանուկեանը գրկաբաց ընդունում է իր հայրենակից երիտասարդ Մանուկին, իր խնամակալութեան ներքոյ վերջնում նրան և վարժեցնում առետըրական գործի մէջ:

Մանուկ Յորդանանեանը հինգ տարուայ ընթացքում բաւականաշատ հմտանալսի իրեն վկճակուած մասնագիտութեան՝ առետըրական գործերի մէջ, խնդրում է իր բարեբար աղա-Գէորգից միջոց շնորհել իրեն առանձին գործելու, ինքնուրովն պարտպանք ունենալու: Մանուկի ինդիրը յարգում է և 1824 թուին նա գնում է Սուրբալիա:

Սուրբալիալում, մի քանի տարուայ ծանր և անդուլ աշխատանքից յետոյ, Մանուկ Յորդանանեանին յաջողում է վերջապէս ձեռք բերել մի պատկառելի անուն և հարսանութիւն: 1835 թուից սկսած նա տէր է դառնում զաքարի մի գործարանի, որ նրա արդիւնաբեր աղբիւրներից մէկն է լինում:

1841 թուին Մանուկը հիւանդանում է և բժիշկների խորհրդով պարտաւորում է գնալ Եւրոպա օգափսխութեան: Այս ճանապարհորդութեան ժամանակ, նա ի միջի ալլօց ալցելում է և Վենետիկ՝ ս. Դաղարի կղզին, հանգիպում է այնտեղ մեր բազմաշխատ և բազմերախտ Միլիթարեան հայրերին և ուսումնասիրում նրանց գարծունէութիւնը, ամբողջ ուխտը իր սարք ու կարգով:

Մեր հարուստ վաճառականներին լատուկ են եղել լա-  
ճախ տարօրինակութիւններ, բնաւորութեան հետաքրքիր  
ու բացառիկ գծեր: Մանուկ Յորդանանեանը նոյնպէս ան-  
մասն չէ լինում այդ լատկութիւնից, բայց և ցոյց է տալիս  
մի շատ հաճելի և հազուազիւտ տարօրինակութիւն:

Դիւր է գալիս նրան Վենետիկի Միթարեան վանքը  
իր Մուրատ - Ռաֆայէլեան դպրոցով և նա վճռում է չընդու-  
նել Վենետիկը որպէս լոկ այցելութեան արժանի մի եւրո-  
պական վայր, այլ երկար կանգ առնել ալնտեղ, մնալ այդ  
խաղաղ վանքումը և օգտուել այդ պատմական կղղեակից:  
Մի խօսքով, նա ցանկութեամ է նորից մանկանալ և ուսում  
ստանալ այնտեղ: Ալդպէս էլ անում է: Զաւայի կեանքից  
զգուած Մանուկ Յորդանանեանը, 43 տարեկան հասակում  
աշակերտում է առ ոտո Հայոց Նահապետի՝ Հայր Ալիշանի և  
ըստ կարելոյն կրթուում նրանից, հաւանականօրէն գրաբար  
հայերէնի մէջ, ինչպէս ցոյց են տալիս նրա նամակները:  
Ապա, Եւրոպայի բոլոր հշանաւոր քաղաքները շրջագայե-  
լուց լեռոյ, վերադառնում է Սուրբայի և տեղափոխուում  
Բատուշիա:

Մանուկ Յորդանանեանը բնաւորութեամբ լինում է շատ  
համեստ և սակաւապէտ, կրօնասէր, բարեալաշտ և նախան-  
ձախնդիր հայաստանեալց Եկեղեցու սովորութիւններին: Նրա  
խօսակցութեան գլխաւոր առարկան և մտածողութեան մի-  
ակ իդէալն է լինում ազգային Եկեղեցու բարդաւաճումն և  
իր ազգակիցների լառաջադիմութիւնը:

Նրա սրտին մօտ է լինում և իր ծննդավայրը՝ բազ-  
մակարօտ Նոր-Զուղան, որտեղից բոլոր իրեն գիմողներին  
նպաստում է և օգնութեան հասնում: Բայց որպէսզի իր  
ազգականներին ու հայրենակիցներին ձրիակերութեան չը-

վարժեցնէ և առ հասարակ վատ օրինակ տուած չլինի նը-  
րանց, տուածնորդ Թագդէոս արք-եպիսկոպոսին ուղղած մի  
նամակում ի միջի այլոց գրում է հետեւալ բնորոշ տապերը:  
« . . . Ես ոչ թէ զլանամ դոցա տարեկան ինչ  
յղել, այլ ցաւիմ, զի տարեկան տուրք ստացեալ, ամեւ  
նեին զախատանաց անփոյթ լինիցին, նոյն և տեսեալ  
զաւակք նոցին ուսանին այնպէս, անաշխատ մնձանան  
և լինին մուրացկան: Ճշմարիտ ասեմ, հասարակապէս  
տաեցող աշխատանաց են Զուզայիցիք. ականատես և  
ականջալուր եմ, քանզի գործել և աշխատելն արհա-  
մարհութիւն անձին համարեն և գնոջ ժամանակն դա-  
տարկութեամբ անցուցանելն՝ պատիւ ինքնանց: Որդա-  
րե ունին պիտոյս տրոց աղբատք, այսինքն որք, այրիք,  
պակասաւորք և ծերացեալք, որք չունին կարողութիւն  
դործելոյ: Բայց առողջ և առոյդ երիտասարդոց և կա-  
րող անձանց ձրի դրամ տալն յանցանք է, զի ծուլու-  
թեան և պղերգութեան առիթ լինիցի նոցա և սերն-  
դոց նոցին»:

Որշափ առողջ կարծիք և ճշմարիտ դիտողութիւն:

Մանուկ Յորդանանեանը հետաքրքրում է միտամա-  
սակ և Նոր-Զուզայի քաղաքական կետնքով և ուրախանում  
նրա անգործութեամբ ու յառաջադիմութեամբ:

Առաջնորդ Թագդէոս արք-եպս. Բէկնազարեանն ի նը-  
կատի ունենալով, որ թէև Նոր-Զուզան արդէն ունի տղա-  
լոց երեք դպրոցներ, սակայն առ ի չգոյէ օրիորդաց դպրոցի,  
հասարակութեան կէս մասը դեռևս մնում է կար և խար-  
խափում է տգիտութեան խաւարի մէջ. ուստի 1857 թուին  
դիմում է Մանուկ Յորդանանեանին, մի օրիորդական դրա-  
բոց հիմնելու առաջարկութեամբ:

Մի զարմանալի զուգագիտութեամբ, Մանուկ Յորդա-  
նանեանը նոյնպէս ալդ միւնոյն ժամանակները մտածելիս է

լինում մի օրիորդական դպրոց բանալու մասին, լղացած է լինում նրա մէջ Նոր-Զուղալի իգական սեռին կրթութիւն տալու վեհ գաղափարը: Աւստի Առաջնորդի նամակը ստանալով և նրանում շօշափուած տռաջարկութիւնն իր սրտին մօտ զգալով, 1858 թուին Նոր-Զուղալի ս. Կատարինեան կուսանաց վանքի ծոցումը հաստատել է տալիս նոյն վանքի անունով մի օրիորդաց դպրոց, հոգալով նրա բոլոր ծախքերը:

Յետով, իր Եւրոպա կատարած ճանապարհորդութեան ընթացքում, տեսնելով և զգացած լինելով, որ մի ազգի մը տաւոր ու բարոյական յառաջադիմութեանը նպաստող գործօններից գլխաւորն մամուլն՝ տպագրութիւնն է, բաւական գումար ծախսելով մի մամուլ է ուղարկում իր հալրենիքը՝ Նոր-Զուղա, որպէս նուէր Ամենափրկչեան ս. վանքին:

1858 թուի Օգոստոսին, առաջին անգամ բացւում է Նոր-Զուղալում Ս. Կատարինեան ազգային օրիորդաց դրայոցը, յատկապէս իգական սեռի կրթութեանը նուիրուած մի հաստատութիւն, որ այդ ժամանակիները բոլոր հայաբընակ կենտրոնների համար կարելի է ասել, հազուագիւտ և խորթ բան է լինում:

Յիշատակութեան արժանի է Կուսանաց վանքի այն ժամանակուայ մայրպետ կոյս Սանգուխարը, որ ընկնում է դոնէ դուռն և ծնողներին համոզում իրենց աղջիկներին դպրոց ուղարկելու, ձրիապէս ուսումն ստանալու համար: Նրա ջանքելը մեծ մասամբ ի գերեւ են ելնում, սրովհետեւ շատ ծնողների համար դեռևս տարօրինակ էր թւում օրիորդներին կրթութիւն տալը, աւելորդ, մինչ իսկ վնասակար էր համարում աղջիկներին զրադիտութիւնը. «Աղջիկն որ գրել կարդալ սովորեց, կսկսի ջահէլներին չիթի զլել և ուրիշ շատ բաներ դուրս կգալ»: Ահա համարեա բոլորի հա-

մոզմունքը, բոլորի հարեմական գատողութիւնը և այն թիւը  
հասկացողութիւնը, որով սիրում են ամեն մի տգեղ վար-  
մաւնք վերադրել կրթութեան, կապել դպրոցի հետ:

Ինչ որ է, բաւական նեղութեամբ ճարւում են 28 ա-  
շակերտուհիներ: 1858 թուի Յուլիսի 27-ին կատարւում է  
Օրիորդաց դպրոցի օրհնութեան հանգէսը և Սդոստոսի 1-ին  
բացւում դպրոցը 28 հիմնադիր աշակերտուհիներսի: Աշ-  
ակերտուհիները իրենց հասուիք և պատրաստութեան համա-  
ձայն բաժանվում են երեք դասերի և զետեղւում Կուսա-  
նոցի սեղանատան մէջ, որը ծառայում է որպէս առժամա-  
նակեալ գասարան:

Ցիշեալ թուականից շատ առաջ ժամանակներում նոյն  
պէս, երբ օրիս գաց դպրոց ունենալու գաղափարն անդամ  
չկար, Նոր-Զուղալի իգական սեռի մէջ գանւում են գրա-  
դէտ անհատներ: Ամեն մի զբագէտ մայր գիտեցածը տ-  
ւանդելիս է լինում ազջկան, սա էլ հերթին՝ իր աղջկանը  
և ոլոպէս յաջաբդաբար: \*) Սակայն 1858 թուից սկսւում  
է Նոր-Զուղալի ընդհանուր իգական սեռի կրթութեան  
գործը, հիմք է դրւում այն վսեմ ձեռնարկին, որ կոչւում

\*) Օրինակ, 1800-ական թուականների ծնունդ Ն. Զուղայեցի սի կին (տ. Սարբա-  
դակիթիսանկան) մանուկ հասակում այնքան հայելին է սովորած լինում, որ 1876  
թուին Թէհրանից իր աղջկան գրած նամակներում թսկել է հետեւեալ տողերը:

ա) «Ըգիկ-Զան, գրումոս որ ջանովամ գինչ, ոչ սրտով, մէջդ մեսնի,  
քո հառակն ինչ ասը գու էղքան զարդ քաշես: Ազիզ սիրող ուլսին պահիր,  
Աստուած քո տէրն շատ պահի, քո եղբայրն շտա պահի, սիրոդ մի գձել,  
Աստուած իխանից էլ կտայ: Քո մարդն ու քո մին անձար եղբայրն զարի-  
բութինում ան, բադ զգումի մի անել, նրանց համար լաւ չի: Վախտ-ըի  
վախտ սիրոդ մի գառնացնել, Աստծոյ վատն չգայ, միշտ սիրոդ ուրախ  
պահիր, որ Աստուած էլ ուրախութիւն տայ: Բասկի Փիքր առ մեռում, ընդուր  
գինչ չես, Փիքրն ջան կըկութը, սիրա կը կոտրի . . . . . :

բ) «Ազիկ-Զան, Թաւրիկ գնալուս լուրբը լույսան տիրէլաս, ինչ անեմ,  
եղորդ թողնեմ, զամ Զուղա, օրն բայրը նսակեմ Փիքր անեմ, ասեմ հարաբ

է «Կանանց դաստիարակութիւն», թէև չափազանց սահմանափակ ծրագրով և բիւտճեռվ:

Սակայն ինչքան էլ ողորմելի ծրագրով և բիւտճեռվ սկսուած լինի, այնու ամենայնիւ մեծ գործ է եղել և աւելի ևս մեծանում է, երբ աշխի առաջ ենք ունենաւմ ժամանակը, խուար միջավայրն ու չափազանց աննպաստ պայմանները:

1860 թւուին աշակերտուհիների աւելանալովը կտրէք է զգացում գպրոցի շենքը հետզհետէ ընդարձակելու և նոր սենեակներ աւելացնելու. ուստի գիմում են դարձեալ Մասնուկ Յորդանանեանին, ինդրելով նրա աջակցութիւնը: Մասնուկը լուրդում է սոյն ինդիբը և անմիջապէս ուղարկում նոր նպաստ, որով հնարաւարութիւն է տրւում գպրոցի հոգաբարձութեանը նոր սենեակներ աւելացնելու և նոր աշակերտուհիներ ընդունելու:


Մասնուկ Յորդանանեանը բացի օրիորդաց գպրոցի սահմանափակ բիւտճեն տպահովելուց, նպատակ է ունենաւմ նաև՝ մեսնելիս իր ամբողջ հարաստութիւնը կտակել նոյն գպրոցին: Սակայն գժեբախտաբար, նա իր կեանքի վերջալու-սին ձախորդութեան է հանդիպում և ոնանկանում է: Այ-

աղիս Ըն դարիբ տեղն ինչ զարձաւ: Աղիզ, Աստուած պահի, դո մարդ ունիս, տեղդ բարեկամ ունես, տուն ու տեղ ունես, գու ինքդ կատարեալ քէֆանի աս, կարող աս քեզ կտավարես, քս մարդովն, քո տանովն խօս ել-նիօ: Առ քո մոտն չելնեմ քեզ համար աւելի զանազանութիւն չունի, բայց եզրորդ մօտն չելնեմ աշխատանքը կիշանայ, զատի տէր չի ելնել, Տէրն ոչ արուծ մի տեղն ցաւի, տէր-տիրական չունի, զարիբ տեղն նովանին ջլոնս կիշանայ, Ազիզ ջան, այժմս ինեղբումամ քեզանից, որ մի տիրել զատն իս դնալին առ Թուրիզ. թող զնամ, որ քս եզրայրն զարիբութեան մէջ չիշանայ և ես մի միջոց պրասագ ամ, ուրախ և գինչ ապրեմ, իմ քաշած նեղութիւններն մոռանամ, և ձես տար ելնի, շատ ունենամ, ամէն ժամանակ էլ մին ձազ-կող քեզ խօս անեմ»:

Ուշադ հմանութիւն Խ. Աբովեանի գրադրիկ սմբն:

նուամենայնիւ, նա չէ մոռանում եղածի մի մասը կտակել ա. Կատարինեան օր. դպրոցին և միւս մասն էլ՝ դարձեալ Նոր-Զուզայում հիմնուելիք մի Հոգեոր դպրոցի:

Մանուկ Յորդանանեանը մեռնում է 1879 թուին, 79 տարեկան հասակում:



1892 թուին նորեկ առաջնորդ Եսայի արքեպոս. Առա- ռածարեատնը վճարելով Ազգ. Կեդրոնական դպրոցի պարտ- քը, աւարտում է նաև նոյն դպրոցի հսկալ շինութիւնը և ստորին դասարաններում հնուց մնացած գրաբար հայերէնի տեղը մտցնում մարենի լեզուի դասաւանդումը:

Յետոյ զգալով ժամանակի պահանջները, և քաջ ըմ- բռունելով որ Մանուկ Յորդանանեանի կտակած գումարի տոկոսներովը ս. Կատարինեան օրիորդաց դպրոցը երկար ժա- մանակ չէ կարսղ իր գոյսւթիւնը պահպանել, ուստի նիւ- թականապէս միացնում է նրան Ազգ. Կեդրոնական դպրոցի հետ և անուանում «Նոր-Զուզայի ազգային երկսեռ դրա- բոցներ»:

Ոյս միացման բարերար հետեանքն է լինում այն, որ խառն եկամուտից հնարաւորութիւնն է տրւում մտցնել Օրիորդաց դպրոցում նոր առարկաներ և աւելացնելով նոր ուսուցիչներ, աշխատել ուսման մտկերթեովթը որոշ շափով հաւասարեցնելու տղայոց դպրոցի հետ:



Մինչև 1898 թիւը ո. Կատարինեան օր. դպրոցի աշա- կերտուհիներն հետզհետէ այնքան աւելացած են լինում, որ ինչքան էլ մեծ սենեակներն երկուսի են դարձնում, ինչքան էլ այս ու այն անկիւնում նոր սենեակներ աւելաց-

նում, դարձեալ Հնարաւորութիւն չէ լինում բոլորին ամ փոփել միևնոյն գպրոցում։ Ուստի լարմար է դատում օրիորդաց գպրոցին կից ա։ Յովհաննու եկեղեցու բակի սենեակներն էլ ծառայեցնել գասարանների։ Բայց դարձեալ Հնարաւոր չէ լինում, կարգապահութիւն չէ պահպանում, դասխոսութեան համար անյարմարութիւններ են լինում, իսկ տաք եղանակին ուղղակի անտանելի դառնում։

Այսպէս ուրեմն, գաստիարակութեան պահանջները, որ այժմ բաւական փոխուած և բարդուած են, պահանջում էին իրենց որոշ լարմարութիւնները, որոնց անհրաժեշտ էր գոհացումն տալ։ Եւ տհա 1899 թուին Հոգաբարձութեան նախաձեռնութեամբ և առաջնորդ Մազաքիա եպս. Տէրունեանի ջանքերով բացւում է մի հանգանակութիւն, որին բացի Նոր Զուղալեցիներից, նպաստում են նաև Հնդկահայերն ու Զաւահայերը և հաւաքւում է 4000 թումանաչափ մի գումար։ \*)

1900 թուին, Մանուկ Յորդանանեանի հիմնած գպրոցի 42-րդ տարում, կառուցւում է ալֆեան «Ա. ԿԱՏԱՐԻՆԵՍ. ՕՐԻՈՐԴԱՅ. ԴՊՐՈՅԾ»՝, որի դահլիճում փակցնուում է մի մարմարեալ արձանագիր Մանուկ Յորդանանեանի անունով, որպէս լիշտատակ նուն գպրոցի նախկին հիմնադրի։ Իսկ Օրերգաց նախկին գպրոցը իր տմբողջ կազմով, իր բոլոր սարք ու կարգով Կուսանաց վանքի նկուզներից փոխադրւում է այս նոր կառուցւուած առանձին գպրոցը։



\*) Հնդկաստանի, Զաւայի և Բրմաստանի նպաստները հանգանակում են Տէրուսկ խաչ. քահ. Յակովիչանցի ձեռքով։

1908 թուին ս. Կատարինեան օրիորդաց<sup>4</sup> դպրոցի հաստատութեան 50-րդ տարին լրացած լինելով, առաջնորդ փոխանորդ հ. Բագրատ վարդապետ Վարդապարեանն ի նըկատի ունենալով այն հանգամանքը, որ օրիորդաց դպրոցի դրամագլուխը մի շատ ողորմելի բան է, մտածում է տօնել 50-ամեայ յոբելեանը և առիթից օգտուելով՝ հանգանակութիւն բաց անել մի «անձեռնմխելի դրամագլուխ» գոյացնելու յօգուտ նոյն դպրոցի:

Հ. Բագրատ վարդապետի ծրագիրը լաջողութեամբ սըսակում է: Մայիսի 25-ին շքեղ հանդիսակատարութեամբ տօնում է ս. Կատարինեան օրիորդաց դպրոցի օ0-ամեայ յոբելեանը \*) և «անձեռնմխելի դրամագլուխ» անուան ներքոյ Նոր-Զուղալում Հայուհեաց Բարեգործական ընկերութեան վարչութեան ձեռքով և Հնդկաստանում ու Զաւայում՝ վիճակաւոր քահանաների ձեռքով հաւաքւում է 5000 թումանչափ մի դրամագլուխ:


Սոյն գումարով 1911 թուին առաջնորդ Սահակ արքեսլս. Ալվատեանը թումանեանց Թէհրանի ներկայացուցիչ Ալէքսան-իսան Թունեանցի միջոցով, լաջողում է Զէլլէսօլթանի որդի Զէլալէ-դօվլէից Փէրիա գաւառի հայտքնակ Բոլորան գիւղը գնել Նոր-Զուղալի Ազգ. երկսեռ դպրոցների անունով, որով դպրոցների բիւտճէի վրայ տարեկան միջին թւով 1200 թումանչափ աւելանում է:



\*) «Նոր-Զուղալի Երարկը» 1908 թ. № 5: Յան Հայում կազմակերպության համար



Առը-Զուղալի Հայ-Կաթօլիկաց վանքը  
իր կրթուած վարդապետների շնորհիւ, սկզբից  
ի վեր՝ ժամանակ առ ժամանակ ունենում է  
փոքրիկ գպրոցներ թէ վանքումը և թէ գուր-  
սը մասնաւոր տներում: 1878 թուին Հ. Յա-  
րութիւն վարդապետ Առաքելեանի ջանքերով  
կառուցւում է «Ա. Գրիգոր Լուսաւորիչ» անունով մի տղա-  
լոց գպրոց և քիչ յետոյ էլ բացւում է օրիորդաց: Վերջինս  
շատ կարճ կեանք է ունենում, որովհետև բազկացած է լի-  
նում միայն մի քանի կաթօլիկ հայերի տղիկներից, որոնց  
դուրս գալու հետ միասին փակւում է և գպրոցը: Իսկ  
տղալոց Ա. Գր. Լուսաւորիչ գպրոցը տասնուհինգ տարի  
պահւում է որպէս «Նոր-Զուղալում այն ժամանակ գոլու-  
թիւն ունեցող միւս գպրոցների չափ կը թութիւն մատա-  
կարարող մի հաստատութիւն և բաւական թւով էլ տշտ-  
կերտներ է ունենում առաջները, սակայն Ազգ. Կեդրոնա-  
կան գպրոցի կանոնաւորությունը սկսում են տշտկերտները  
կամ աց կամաց նուազել, մինչև որ 1893 թուին բոլորովին  
փակւում է: Երեք տարուց յետոյ նորից բացւում է, բայց  
շուտով գարձեալ փակման գտատապարտուում:



1903 թուին Հայ-Կաթօլիկաց մատրիարք Եմմանուէ-  
լեանը թողնելով «Նոր-Զուղալի թեմը, վերջինս ընկնում է

Ուրմիոյ Լատին եպիսկոպոսութեան անմիջական իրաւասութեան ներքոյ; \*) Հետզհետէ գալիս են բաւական թւով վարդապետներ ու կոյսեր և իրենց ձեռքն առնում 1705 թուին կառուցաւած վանքն ու եկեղեցին։ Ապա բաց են անում և Գր. Լուսաւորիչ տղայոց դպրոցն և Կուսանոցում աւելցնում մի նորն՝ օրիորդաց համար։

Ֆրանսերէն լեզուն սովորելու նպատակով, միւս գրադրոցներից՝ գլխաւորապէս բողոքականաց մօտից սկսում են նախ կաթոլիկ ծնողների երեխաները և յետոյ հայերից համաց-կամաց հաւաքուել նորաբաց դպրոցները։

Աշակերտ-աշակերտուհիների հետզհետէ ըազմանալու շնորհիւ, անհրաժեշտ կարիք է զգացւում ձեռնարկելու նոր շինութիւնների։ Ուստի Կուսանոցի շինութեան վրայ աւելցուում է մի երկրորդ յարկ, իսկ Վանքի պարտիզում մի երկարականի նոր դպրոց տղայոց համար։ Սոյն դպրոցի շենութիւնն աւարտելուց յետոյ, փակւում է և Գր. Լուսաւորիչ դպրոցը և իր ամբողջ սարքով տեղափոխուում այստեղ 1907 թուի 0գոստոսի 20-ին։

Կաթոլիկ միսիոնարութեան արդի երկսեռ դպրոցները իրենց յաջորդութեամբ պարտական են վերատեսաւէ հ. Ե. Գրմուտի եռանգուն գործունէութեան, որ բացի նոր Զուղարում հաստատած երկսեռ դպրոցներից, 1911 թուից ակած Սփահանում յատկապէս պարսիկ ժողովրդի համար հիմնում է մի այլ դպրոց «Սէթարէ-սօբհ» (Ալուսեալ) անունով։



\*) Հայալելիթ 1904 թ. № 83։

1876 թուին բողոքական միսիօնարները հաստատում են Նոր-Զուղայում մի տղայոց դպրոց, ուր անգլիերէն լեզուն սովորելու նպատակով սկսում են մեծ թւով երեխաներ յաճախել: Եւ իրաւ, մանաւանդ Պր. Հէնրու տեսչութեան օրով դպրոցը յառաջադիմութեան կողմից նախանձելի տատիճանի է հասնում և մի խումբ կրթուած երիտասարդներ ընծայում Նոր-Զուղային: Սակայն յետոյ, կամաց-կամաց կորցընում է իր նախկին հմալքը, մինչև հասնում է մեր օրերը:

Տղայոց դպրոցի սկզբնաւորութիւնից քիչ յետոյ հաստատում են և մի օրիորդաց դպրոց, որ նոյնպէս ունենում է իր փառաւոր անցեալը, յատկապէս աշակերտութեան քանակի կողմից:

1905 թուից սկսած Միսիօնարութիւնն ընդուրձակելով իր գործունէութեան շրջանը և միևնույն ժամանակ նպատակ ունենալով բուն պարսիկ ժողովրդի մէջ գործել, կամաց-կամաց կենտրոնանում է Սփահանում, հետեւաբար և սահմանափակում է Նոր-Զուղայի երկսեռ դպրոցները, մանաւանդ տղայոցը:

Սփահանում մտադիր են կառուցանել ի միջի ալլոց և մի բարձրագոյն դպրոց (Կոլլէջ), համապատասխան հոչտկաւոր Հիւանդանոցին: Վերջինս իր մարդասիրական ծառայութեամբ ուղղակի պատիւ է բերում Քրիստոնէական կրօնին, որի սկզբունքները տարածելու կոչումն ունի Միսիօնարութիւնը:



# Ե.

Նոր - Զուղալի պատմութեան  
մէջ «Վաճառականութիւն Զու-  
ղալիցւոց» գլխում 1702 թուին Մհծ-



Մէլլան թաղի «Խօջա - Նազա-

բէնց տասնակ» կոչ-

ուած մասում, յիշեում է Սւետ Քանանեան մի վաճառա-  
կանի անուն: Ենթադրւում է, որ սա ի թիւս բազմաթիւ  
այլ գաղթականների, Ժէրդ գարի վերջերին թողած լինի  
Պարսկաստանը և գաղթած Ծուսաստանի զանազան վայրեր:  
Ենթադրւում է նոյնպէս, որ սոյն ազգատոհմի շառաւիդ-  
ներից մէկն լինի և հանգուցեալ Գէորգ Քանանեանը, որ  
ծնւում է Ղզլարում 1834 թուին:

Գ. Քանանեանը նախնական կրթութիւնը ստանում  
է Ստաւրոպոլի գիմնազիայում, իսկ 1854 թուին մտնում է  
Մոսկուայի Համալսարանի պատմա-լեզուաբանուկան Փակու-  
տէտը: Սյս թուականներին Մոսկուայում հայ ուսանողնե-  
րի սահմանափակ շրջանում կազմուում է մի գրական ընկե-  
րութիւն, որի նպատակն է լինում տալ ժողովրդին գիւրըմ-  
բռնելի ընթերցանութեան գրքեր և այդպիսով զարկ տալ  
նորածին աշխարհիկ գրականական լեզուին: Ընկերութեան  
երեք հիմնադիր անդամներից մէկն է լինում Գէորգ Քանա-  
նեանը, որի անուան և ազգանուան սկզբնատառերը գլու-  
նըւում են նոյն ընկերութեան՝ «Գամառ - Քաթիպա» ան-  
ուան մէջ, որ և լետոյ գառնում է ընկերութեան աւե-  
լի քանքարաւոր անդամի՝ բանաստեղծ Ուաֆալէլ Պատկա-

Նեանի կեղծանունը:

1858 թուին Գ. Քանանեանը յաջողութեամբ աւարտելով պատմաբանական բաժանմունքը, պահւում է նոյն համալսարանում որպէս ուսուցչապետ պատմութեան: Պատրաստուելով մագիստրոսական քննութեան, Քանանեանը զբաղւում է միաժամանակ և պատմութեան դասաւանդութեամբ: Այս առարկալին հիմնովին տիրապետելը, խօսելու ձիրքը, մեղմ և հեղաշամբուլը բնաւորութիւնը, ինչպէս և աշակերտների հետ վարուելու հմտութիւնը, միանգամից բարձրացնում են տաղանդաւոր մանկավարժին և նա շատ դասեր է ունենում Սոսկուալի այն ժամանակուալ նշանաւոր դպրոցներում:

1861 թուին Լազարեան ճեմարանից հեռանում է ընիկ Նոր-Զուզալյեցի՝ պրօֆեսօր Մկրտիչ Եմինը և նրա տեղը թափուր է լինում: Քսանհինգ-ամեալ Գէորգ Քանանեանի թեկնածութիւնն է գրւում և նա մտնում նոյն ճեմարանը վերահսկիչի պաշտօնով: Քսոն տարուց յետոյ Գ. Քանանեանը նշանակւում է Լազարեան ճեմարանի տեսուչ և արդ պաշտօնին անդաւաճան կերպով նուիրուած մնում է մինչև մահը:

Գէորգ Քանանեանը Լազարեան ճեմարանում 36 տարի պաշտօնավարելով, մացնում է մի շարք կարևոր բարեփոխումներ և գերանորուզումներ թէ ուղղութեան, թէ ծրագրի և թէ շինութեան կողմից, որով յաջողում է բարձրացնել նոյն ճեմարանի գիրքը, որ մինչև իր օրերը մօտեցել էր կորցնելու նախնական բնաւորութիւնը և իջնելու հասարակ դպրոցի:

Կատարեալ վստահութիւնը և յարգանքը դէպի դասատուների դործունէութիւնը, մշտական պատրաստակամու-

թիւնը լսելու ամենքի կարծիքները, հակադիր հայեցքները հաշտեցնելու ունակութիւնը և պատահած պտռակառութը մտրեցնելու լատուկ տակտը Գէորգ Քանանեանին սիրելի են գալձնում Լազարեան ճեմարանի ըոլոր ուսուցիչներին: Նրանցից ամեն մէկը աշխատում է խաղաղ և աշխովժ, իմանալով որ կալ մէկը իր արժանիքը գնահատող և առ հարկին իրեն օգնութեան հասնող:

Գէորգ Քանանեանը իր ժամանակի սաների համար լինում է մի գթած և ինտամող հայր: Նա ճանաչում է ոչ միայն ամենքին, այլ և այն զբջապատը, այն միջավայրը, որից դուրս եր եկել երեխան: Ընտանիքից և հայրենիքից կտրուած և հեռու օտարութեան մէջ ընկած դժբախտ երեխաները մի առանձին վստահութեամբ են մօտենում իրենց սիրելի տեսուչ Գէորգ Քանանեանին՝ իրենց կարիքներով և վշաերով, հաւատացած լինելով, որ անպայման կը վայելեն նրանից խորհուրդ և պաշտպանութիւն, սէր և համակրութիւն:

Քաղտնի խորհրդական տեսուչ Գէորգ Քանանեանը այնքան տարուած է լինում Լազարեան ճեմարանով և այնքան նուիրուած է լինում դաստիարակչական վեհ գործին, որ ժամանակ չէ գտնում գրելու, թէև ունենում է առաջնակարգ գրական տաղանդ: Նրա տպագրուած աշխատութիւնների մեծ մասը վերաբերում է Լազարեան ճեմարանին և Տաճկահայութեան, որի հակատագրով նա սկսում է հետաքրքրուել գեռ 18<sup>05</sup> թուին — Զէլթունցիների ապստամբութեան ժամանակ և որի նկարագրութեանը նուիրում է մի շարք լոգուածներ:

Անօրինակ չարիքը որ պայթեց գժբախտ տաճկահայերի գլխին և ոռւս մամուլի մի քանի օրգանների թշնամա-

կան վերաբերմունքը դէպի հալերը, ստիպում են Գ. Քանանեանին մի ընդարձակ պատմական տեսութիւն զըել Ռուսաստանի՝ Ալէքսէլ Միխալովիչի և Պետրոս Մէծի ժամանակից հալերի հետ ունեցած յարաբերութիւնների վրայ և դրանով լուսաբանել Հայկական հարցը, սակայն անագործն մահը զրկում է նրան այս կարեռը աշխատութիւնն աւարտելու հնարաւորութիւնից և նա մեռնում է 1897 թուի Յանիսի 4-ին։ \*)

Գ. Քանանեանի մահուամբ Հայութիւնը կողցնում է մի անձնագոհ և տաղանդաւոր մանկավարժ, Լազարեան ճեմարանը՝ մի սրտացաւ և քրտնաջան տեսուչ, իսկ նոյն ճեմարանի աշակերտութիւնը՝ մի բարի, հոգատար և խնամող հայր։

Գէորգ Քանանեանը մի իդա, մի փափադ է ունենում, ալդ այն է, որ Հայաբնակ որ և է վայրում մի դպրոց Հիմնէ, սակայն իրեն միայն յալտնի պատճառներով, ալդ բանը նրան չի յաջողում կենդանութեան ժամանակ։

1899 թուին ա. Վառվառէ Քանանեանը վճռում է իրագործել իր անմռուանալի ամռունու ջերմ ցանկութիւնը։ Իսկ որովհետեւ ալդ ժամանակ Գօլիցինեան Հայակեր քաղաքականութեան շնորհիւ Ռուսաստանում Հայոց դպրոցները փակուել են և հետեւապէս նոյն տեղը մի նոր դպրոց բաց անելու մասին մտածելն անգամ աւելորդ էր, ուստի վճռում է ալդ դպրոցը բաց անել Պարսկաստանի Հայաշատ քաղաքներից մէկում։

Դիմումներ են լինում ա. Քանանեանին Պարսկաստանի մի քանի կենտրոններից, խնդրելով իրենց մօտ բաց անել դպրոցը։ Տիկին Վ. Քանանեանը տատանւում է, որտեղ ար-

\*) Գլ. Զանշեանի «Եղբայրական օդնութիւն» էջ 640.

գեօք հիմնել, որ թէ նպատակալարմար լինի և թէ անհրաժեշտութիւնն աւելի զգալի:

Երկար մտածելուց յետով, անձամբ դիմում է ո. Եջմիածին և սայն կարեսը ինդրի առթիւ հայցում է Վեհ. Կոթուզիկոսին, որ բարեհաճէ որ և է պաշտօնով Մոսկվայում գտնւող հ. Բագրատ վ. Վարդապարեանին ուղարկել նոր—Զօւղա, սրպէսզի ուսումնասիրելով Պարսկաստանի հայութքնակ կենտրոնները, ուր որ յարմար կըդատէ ըստ իր հայեցակութեան, խորհրդատրէ իրեն իր ցանկացած դպրոցը հիմնելու:

1900 թուի վերջերին երջանկալիշատակ Խրիմեան Հայրիկի կոնդակով և յանձնարարութեամբ հ. Բագրատ վարդապետը գալիս է Նոր—Զօւղա սրպէս Առաջնորդական փոխնորդ: Նա ի մօտոյ ծանօթանալով Նոր—Զօւղալի տեղական պայմանների հետ և ի նկատի առնելով այն հանգամանքը, որ թէև ամենաշատ հայ աշակերտութիւն ունեցող վայրն է ամբողջ Պարսկաստանում, սակայն եղած ազգ. դպրոցները (այն ժամանակուայ) բիւտճէի խիստ սահմանափակ լինելուն շնորհիւ՝ անկարող պիտի լինին ժամանակի պահանջներին գոհացումն տալ, հետևապէս ապագայում անկման գրութեան են հասնելու ի մեծ ուրախութիւն օտար մըցակիցների: Ուստի զալիս է այն եզրակացութեան, որ Նոր—Զօւղան իր մի շարք ազգային հաստատութիւններով ամենալարմար տեղն է Պարսկաստանում Գէորգ. Քանանեան դպրոցը հիմնելու: 1901 թուի Հոգաբարձական ժողովներում մշակում է կանոնադրութեան գլխաւոր կէտերը և գործի դրութիւնը մանրամասնաբար զեկուցանում տիկին վ. Քանանեանին: Յարգելի Տիկինը բոլորովին վստահացած հ. Բագրատ վարդապետի ցուցմունքներին ու հրահանգներին, ըն-

գունում է իր հիմնելիք դպրոցը բաց անել Նոր-Զուղալում, յատկացնելով հանգ. ամսունու՝ Գէորգ Քանանեանի թողած 47,000 ռուբլի գումարը ալդ նպատակին (40,000 իրեւ անձեռնմխելի դրամագլուխ, իսկ 7000 դպրոցի շինութեան համար):

Քանի որ Գէորգ-Քանանեան դպրոցը վերջնականապէս հաստատելու համար երկու կողմից գեռ կալին մի քանի կետեր, որոնք պիտի պարզաբանուէին, իսկ նամակագրութեամբ էլ դժուար էր լինում և գործը ձգձգւում, անհրաժեշտ է համարում որ հ. Բագրատ վարդապետը վերադառնալ ու էջմիածին և Մոսկուա, անձամբ բանակցելու դպրոցի հիմնագիր տ. Առաջառէ Քանանեանի հետ, որ ցանկանում էր օր տաաջ տեսնել իր նպատակը իրագործուած:

Որովհետեւ յարգելի Տիկինը ցանկութիւն է ունենում իր հիմնելիք դպրոցը տպագայում ընդարձակել, միջնակարգ դարձնել և գործնական գիտութիւններ ևս մացնել, ուստի համաձայնում է շինութեան համար յատկացը ած 7000 ռուբլի գումարն աւելացնել: Իսկ Հոգաբարձութեան յալտնած մանրամասն աեղեկութիւնների հիման վրայ՝ Մոսկուայում ճարտարապետի ձեռքով կազմել է տալիս տպագալ շենքի յոտակագիծն ու նախահաջիւր:

1902 թուին Գէորգ-Քանանեան դպրոցի կանոնադրութեան գլխաւոր հիմքերը մշակւում և Ա. Հայրապետից վաւերացրաւում են Ս. Էջմիածնում Յունիս 6 թուակիր մի սրբատառ կոնդակով: \*)

Նոյն թուի վերջերին հ. Բագրատ վարդապետը վերադառնում է Նոր-Զուղա, որպէս Առաջնորդական Փախանորդ և

\*) Հանդիսաւոր կերպով կարգացուած Նոր-Զուղայի Ա. Ամենափրկչեան Վահագում Գեղարքունիքի մասին օրենքը, 22-ին:

միւնոյն ժամանակ թեմական վերատեսուչ գպրոցների և Ներկալացուցիչ տ. Վ. Քանանեանի: 1903 թուի գարնանը ձեռնարկւում է Գէպրդ. Քանանեան մանկապարտէզի և երկդասեան գպրոցի շինութեան գործը և 1905 թուին աւարտւում է, մօտ. 11,000 թուման ծախսելով: \*)

Ալուպէս, 1901 թուից սկսած Գէպրդ Քանանեանի լիշտակին հաստատւում է Նոր-Զուղարյում «Գէմիք. Ք. Ց. Ա. Ն. Ա. Պ. Պ. Ո. Յ.» և 40,000 ռուբլի գրամագլխի տարեկան 2000 ռուբլի տոկոսն աւզարկւում է շարունակաթար մինչև 1904 թիւը, եթէ տ. Վ. Քանանեանը կանխաւ. յայտնած իր ցանկութեան և Հոգաբարձութեան խնդրանոց համաձայն՝ բարեհաճռում է ամբողջ գրամագլուխը փոխադրել Նոր-Զուղա: Օրուայ թանգ կուրսով՝ ստացուած գրամագլուխը փոխանցում է պարսկական գրամի և վրան աւելացնելով՝ տոկոսի մի մասը լինում է 25,000 թուման, որ ապահովացրւում է Սփահանի Կայսերական բանքում:

1905 թուի Սեպտ. 26-ին շքեզ հանդիսաւորութեամբ կտարւում է գպրոցի բացման հանդեսը և Ազգ. Կեդրոնական ու. ո. Կատարինեան գպրոցների աշակերտաշակերտուհիները մինչև Բ. գաստրանը տեղափոխւում են Գէպրդ Քանանեան գպրոցը, որ հայրապետական սրբատառ կոնդակով լարգելի տ. Վ. Քանանեանի կողմից նուիրաբերւում է ազգին իր հոյակապ շինութեամբ ու 25,000 թուման գրամագլխով և միանում Նոր-Զուղայի Ազգային երկուո գպրոցների հետ:

\*) Մոյն դումարի 1000 թումանով գնուում են երկու տներ, չենքի աեղն ընդգրանակելու համար:

ԿՈՆԴԱԿԻ ՊԱՏՃԵՆԸ



**ԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈ-  
ՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՈՔՆ Ա.ՍՈՒԻԾՈՅ  
ԵՊԻՍԿՈՊՈՍՈ.ՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ Ա.ՄԵ-  
ՆԱՅՆ ՀԱՅՈՅ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐք ՀԱՄԱԶԳԱ-  
ԿԱՆ ՆԱԽԱԾ.ՄԵԾԱՐ Ա.ԹՈՒՈՅՈՅ Ա.ՐԱՐԱՏԵԱՆ Ա.ՌԱՔԵԼ.Ա.-  
ԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ԿԱԹՈՒՂԻԿԵ ԿԶՄԻԱՆՆԻ**

Տամք զայս Կոնդակ հաստատութեան առ յապայն ի  
դործադրութիւն յանուն Տ. Թեմակալաց վիճակին Պարսկ-  
Հնդկաստանի, Փոխանորդաց նոցին, Առաջնորդական Խոր-  
Հրդարանին Զուղայու, Թեմական Վերատեսչաց, Հոգաբարձ-  
ռաց Պալրոցաց և Համայն ժողովրդին հայոց վասն նորոգ  
բացեալ Պալրոցին յանուն՝և ի յիշատակ ի Տէր հանդուցեալ  
Քաղանի Խորհրդական Գէորգայ Քանանեան:

Յիշատակաց արժանին՝ հիմնագիրն Գէորգ-Քանանեան  
Պալրոցին վիճակիդ՝ Պետական Քաղանի Խորհրդական Գէորգ  
Քանանեան, իբրև ճշմարիտ հայ և իբրև հարազատ զաւակ  
մօրս լուսոյ Ա. Եջմիածնի, զգացեալ զպարտու իւր առ

ազգն և եկեղեցին ի վերջին ամս իւր յանկացեալ էր բանալ Դպրոց մի ազգալին ի կարեւոր կեդրոնի միում յաղագս լուսաւորութեան, կրթութեան և դաստիարակութեան կարօտաւոր հայ մանկաւոյն, յանձնելով զիրագործումն յանկութեան իւրոյ՝ տիկնոջ իւրում։ Յետ մահուան հանգուցելոյն, բարեկաշտառհի ամուսին նորին Դերագնուուհի տիկին Վառվառէ Քանանեան՝ իբրև հաւատարիմ աւանդապահ ամուսնոյն իւրոյ և կատարող կամաց հանգուցելոյն, սրբութեամբ կատարեաց զփափագ ամուսնոյն, տալով քառասուն եօթն հազար ըուբելի յալն նպատակ։ Եւ ընկալեալ ի Մէնջ զհրաման և զօրհնութիւն ի գործ ձեւնարկութեան Դպրոցին՝ որոշեաց բանալ զայն ի Նոր-Զուղա, յանձնելով զայն հոգ և հսկողութիւն Փոխանորդի Սուաշնորդի վիճակիդ և միաբանի Մալր Աթոռուս Հոգեշնորհ Տ. Քագրատ Վարդապետի Վարդապարեան։ Արդ՝ որ տաւաք զհաւանութիւն մեր և զհաճութիւն յաղագս բացման Դէորդ-Քանանեան Ուսումնաբանին ի քաղաքիդ Զուղայու Միրանեան աշխարհիդ՝ ընդ հովանեաւ Նորին Արեգակնավայլ Մէծութեան Մուզաֆֆար-էդդին Շահնշահին և Յաջորդաց Նորին Ինքնակալացն Իրանի, պարտիս Մէր համարիմք սովին Հայրապետական Կոնգակաւ հաստատել և տալ զծրագիրն Դպրոցին յանփոփոխ գործադրութիւն յապագալին։

«ա). Մէծարգոյ տիկին Վառվառէ Քանանեանի յանկաւթեան համաձայն Նոր-Զուղայի կեդրոնական և յարմարաւոր տեղում պիտի կաւուցուի նրա ամուսնու թողած դրամով մի նոր շէնք «Դէորդ-Քանանեան» Դպրոցի համար։

բ). Սոյթ Դպրոցի շէնքն լինելու է եկեղեցական ուժիականութիւն՝ մահմէդականաց օրէնքի համաձայն վախի։

գ). Դէորդ-Քանանեան Դպրոցի պահպանութեան հա-

մար տիկին Վառվառէ Քանանեանը՝ ի լիշտակ իւր ամուսնու Գաղտնի Խորհրդական Գէորգ Քանանեանի և նրա ցանկութեան համաձայն, նուիրում է քառասուն հազար բաւթի (40,000 ր.), որ ժողել է իր ամուսինը ոլոր նպատակով, (բացի գոլրոցի շենքի համար յատկացրած գումարից):

Դ). Դպրոցի պահպանութեան համար յատկացրած ամբողջ գումարը պիտի մնալ անձեռնմխելի դրամագլուխ Գէորգ-Քանանեան Դպրոցի անսւնով միանգամայն ապահով Դըրամատան մէջ՝ Ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսի, Հիմնադրի (իսկ մտհուանից յետոյ Կտակակատարների) և Դպրոցի Հոգաբարձուկան մարմնի հոկազութեան և պահպանութեան տակ: Եթէ հարկ լինի այդ դրամագլուխը հանել մի դրամատանից և գնել Ոսւսուստանի կամ արտաստհմանի այլ ապահով դրամատան մէջ և կամ գնել մի ապահով և շահաբեր կալուածք, ալդպիսի բոլոր պատասխանատու գործադութիւնները պիտի կտարուին Հիմնադրի (Կտակակատարների) և Քանանեան Դպրոցի Հոգաբարձութեան փոխագարձ համաձայնութեամբ և Վեհափառ Կաթուղիկոսի թուլտութեամբ:

Ե). Գէորգ-Քանանեան Դպրոցը առալժմ երկասեան է (հինգ տարուայ գասընթացքով), երկեռ մանկապարտէզով, իսկ ապագայում, երբ Գէորգ-Քանանեան Դպրոցի նիւթական միջոցները կըներեն, հետզհետէ պիտի բացուին յաջորդ դատարաները և ու և գառնայ միջնակարգ դպրոց գործնականերով:

Զ). Գէորգ-Քանանեան Դպրոցը առալժմ լինելով երկեան, ծառալյում է իրեւ նախակըթական մասն Նոր-Զուղալում գոյութիւն ունեցող Կեդրոնական Դպրոցի, վերջինի հետ կապ ունենալով ծրագրի միութեամբ և յաջորդականու-

թեամբ։ Գ.-Քանանեան Դպրոցը միշտ պիտի սլահպանէ իր ինքնուրոյն գոյսւթիւնը։

է). Գէորգ-Քանան եան Դպրոցը լնդ միշտ անփոփոխ պահելով իր անունը, գտնուելու է ազգիս Ա.ԵՀավառ Կոլուղիկոսի և Թեմական Առաջնորդի Հոկողութեան և Հովանաւորաւթեան տոկ, բայց կառավարուելու է ընտրած Հոգաբարձական մարմնի ձեռքով։

ը). Հոգաբարձական մարմինը բաղկացած պիտի լինի ութը (8) անգամներից, որոնք պիտի ընտրուին Նոր-Զուղալի եկեղեցիների ծխականների կանոնաւոր ժողովում, որ կալանալու է Թեմական Առաջնորդի նախագահութեամբ։

լ). Հիմնադիր տիկին Վառվառէ Քանանեանը պատուաւոր Հոգաբարձուհի է Գ.-Քանանեան Դպրոցի։

ծ). Տիկին Վառվառէ Քանանեանը իրաւունք ունի ընտրել և նշանակել Փոխ-Տեսուչ Գ.-Քանանեան Դպրոցի Համար՝ իւր և դպրոցի Հոգաբարձութեան փոխադարձ Համաձայնութեամբ, իսկ նրա մահուանից յետոյ՝ Կտակակատարների և Հոգաբարձութեան։

ծա). Ի նկատի ունենալով, որ Գէորգ-Քանանեան Դըպրոցը ընականաբար շատ մօտ էր լինի Հիմնադրի սրտին, Հոգաբարձութիւնը իր պարտքը կը համարի միշտ խորհրդակցել նրա հետ այն ամեն կարեւոր խնդիրների մասին, որոնք կարող են նպաստել Գ.-Քանանեան Դպրոցի բարեկարգութեանն և բառաջադիմութեանը ըստ ուսումնականի և ըստ անտեսականի։

ծբ). Հոգաբարձութիւնը ընդհանուր լինելով Նոր-Զուղալի երկսեռ գլուցների համար, իւրաքանչիւր ուսումնական տարավերջին, ինչպէս Գէորգ-Քանանեան Դպրոցի, նոյնպէս Զուղալի միւս Դպրոցների հաշիւները պիտի ապագրի

և ներկայացնի Ազգիս Վեհափոռ Հայրապետին, Առաջնորդին և Հասարակութեան ի քննութիւն։ Այդ Հաշուի հետ միասին Հոգաբարձութիւնը պիտի ուղարկէ Գո-Քանանեան Պըպ-րոցի մանրամասն Հաշիւները և ուսումնական տեղեկագիրը տիկին Վառվառէ Քանանեանին։

(ծ4). Առաջնորդական Փոխանորդ և Պալրոցների Վերատեսուչ Տ. Բագրատ Վարդապետ Վարդապարեանը լինելու է ներկայացուցիչ Հիմնադրի կողմից և ունենալու է ձայն Հոգաբարձուկան ժողովում։ իսկ նորա բացակայութեան ժամանակ, Հիմնադրի տիկին Վառվառէ Քանանեանը իրաւունք ունի ներկայացուցիչ ընտրել Հոգաբարձութեան անդամներից մէկին և կոմ որ և է ձեռնհաս անձին Զուղալից։

(ծ5). Գէորգ-Քանանեան Պալրոցը, ինչպէս և Զուղալի միւս գլուցները միշտ գրուած պիտի լինին ազգալին զօրեղ Հիմքերի վերալ և կազմակերպուած ժամանակակից մանկավարժական պահանջների համաձայն։

(ծ6). Գէորգ-Քանանեան Պալրոցը հետզետէ վերածելով միջնակարգի, ծրագրի մէջ (բարձր գասարաններում) պիտի մտցնել գործնական գիտութիւններ (արհեստագիտական, առևտրական, և երկրագործական բաժինով աեղական պայմանների համաձայն)։

(ծ7). Գէորգ-Քանանեան Պալրոցում, ինչպէս և Զուղալի միւս գլուցներում, Հայոց լեզուն, Հայոց պատմութիւնը, Հայոց գրականութիւնը և Հայոց եկեղեցական պատմութիւնը անհրաժեշտ առարկաներ պիտի լինեն։

(ծ8). Գո-Քանանեան Պալրոցում բալոր առարկաները պիտի գասախօսուեն Հայոց լեզուով, բացի օտար և Պետական լեզուներից։

(ծ9). Եւ Զուղալի գլուցները կունենան մի ընդհանուր

Տեսուչ (Հոգաբարձական ժողովի ընտրութեամբ). իսկ Քանանեան Դպրոցը տառնձին փոխտեսուչ, որոնք պիտի լինին չայ Առաստարշական:

ԺԵ. Տեսուչը Գ.-Քանանեան Դպրոցի վերաբերմամբ կարգադրութիւն տնում է անպատճառ փոխտեսչի հետ խորհրդակցելով և նրա միջոցով:

Ի. Տեսուչը Հոգաբարձական ժողովի տնդամ է և ունի մի ձայն, իսկ երբ խնդիրը վերաբերում է Քանանեան Դըպրոցին, փոխտեսուչն ևս ներկալ պիտի գտնուի Հոգաբարձական ժողովին նոյն իրաւունքներով:

ԻՊ. Բոլոր ուսուցիչները պիտի ունենան բարձրագոյն կամ միջնակարգ կրթութիւն և լինին Հայ:

Է. Տեսուչը, փոխտեսուչը և ուսուցիչները իբրև ժանկավարժական մարմին՝ անկախութիւն պիտի ունենան կըրթական և մանկավարժական խնդիրներում, անշատշաղ զեկավարուելով գոյրոցների համար մշակուած ծրագրով և կանոնագրութեամբ, որ վաւերացրած կլինի Ծալրագոյն Հոգեւոր Իշխանութեան կողմից:

ԻՒ. Եթէ ապագայում պարմանները փոխուելով, հարկ լինի փոխոգրել Գ.-Քանանեան Դպրոցը՝ Ն.-Զուղալից՝ Հայաստանի մի որ և է բազմահայ յարմարաւոր կեդրոն, այդպիսի գեղքում այդ որոշումը պիտի կայտնայ Վեհ. Կաթուղիկոսի, Կատակակատարների և Հոգաբարձութեան փոխադարձ համաձայնութեամբ:

ԻՎ. Ամեն տարի Սեպտ. ամսին Ա. Գէորգ. Զօրավարի տօնին պիտի մատուցոնել պատարագ ի լիշտակ հանգուցեալ Գէորգ Քանանեանի և կատարել հոգեհանգիստ Ն.-Զուղալի Ամենափրկչեան Վահեքում, կոմ Ա. Գէորգայ Եկեղեցում, ուր ներկայ պիտի լինեն Քանանեան Դպրոցի ուսուցիչներն ու աշակերտները:

թ), Հիմնագիրը (կամ Կառկակատարները) իրաւունք ունի ուղարկել մի ներկայացնեցիչ՝ անձամբ մօտից ծանօթանալու համար Գ. Քանոննեան Դպրացի հետ և զեկուցանելու ։

Հաստատելով զվերուգբեալ ծրագիր, Մեք լիալու եմք, զի Գերապատիւ Աթուակալք Ն. Զուզայի, Բարեշնորհ Փախանորդք, Խորհրդարան Առաջնորդարանիգ, սրակէն և Հոգարարձուք և Տեսուչք՝ սեպուհ պարտիս ինքեանց Համարեսցեն սրբութեամբ և անժերի կատարել կէտ առ կէտ զօդուածո ծրագրին, որ ի Ասնգակիս, առ ի արդիւնուոր և լուսամե կացուցանել զգպրոցն ըստ ցանկութեան ազգամէր Հիմնագրին և բարեպատշատ հի տիկնոջ, որ ունի հաստատապէս զգիտաւորութիւն ընդարձակելոյ զայդ հաստատութիւն, ապահովելով նորանոր նուիրատուութեամբ լիւրմէ կողմանէ ի պէտո գործնական զիտեհեաց, նախանձելի յաչո հայ ազգին հանգիտացուցնելով, որով և փառաւուրեսցին Հոգիք Հիմնագրացն յերկինս և օրհնեսցին լիշտակք նոցին լազգաց յազգօս ։ Եւ Մեք մազթելով ի Տեսանէ զհանգիստ հոգւոյ Հիմնագրին և արեշտառութիւն գերազնւու հի արկին Վառվաւեալ Վանանեան՝ իրազործողի զիտմա ամուսնոր, ազօթեմք, զի Տէր Ստուած լորատե պահպանեցէ զայդ նոր ուսոււմնարանդ վասն ազդիս մէրոյ և փոքրիանց մերազնէից, զօրացուցէ Փրկիչն զաշխատաւոր և զվաստակաւար զհագարձուու և զինամակալս ազգալին հաստատութեանդ այդորիկ Յիշտակին արդարոց օրհնութեամբ լիշեացի, և օրհնութիւն Ստուածալին հանգերձ պահպանութեամբ Աջոյն Ս. Լուսուարչին ի վերալ հաստատութեանդ եղիցի, ամէն։

### Մ Կ Ր Տ Ի Զ

Կարուղիկոս Ամենայի Հայոց

ի 6 Յունիսի 1902 ամի


և բառ Տումարիս Աթօթի.

ի Հայրապետութեան Մերում թ., ամի,

յԱրարատեան Մայր Աթոս Ո. Եջմիածնի, —ի Վաղարշապատ թ. 871

Կազմակերպութեան մէջ իր բարեգործութեամբ լոյտնի՝ Ազնւուհի առ Վասարակ Քանանեանը նոր-Զուղուի Գեղորդ Քանանեան դպրոցի հետ միաժամանակ հ. Բագրատ վ. Առաքազարեանի միջոցով բարեհաճում է Հիմնել Փերիա գաւուի Նամակերտ գիւղում և մի գիւղական դպրոց «Յօվնանեան» անուշնով ի լիշտատկ իր ծննդաց։ Սոյն դպրոցի շինութեան համար ևս նուիրարերում է 800 ռուբլի. սակայն պայմանագրութեան այլքան գումարով հազիւ հնարաւոր է լինում մեծ ծրագրով Հիմնած դպրոցի շինութեան կէսը միայն աւարտել, ուստի ս. Ամենափրկչեան վանքի միաբան և նոյն զաւառի հոգի որ հօգիւ հ. Եղիշիկ վ. Երկարակեցեանն աշխատում է գիւղացիներից հանգանակութեամբ և զանազան աղբերներից հոգալով լրացնել հսկայ շինութիւնը, որ այսօր պատիւ է բերում նոյն գաւառի Հայութեան և միենայն ժամանակ ծառայում է իբրև Փախանորդաբան թեմիս Հոգեոր իշխանութեան Փերիայի ներկայացուցչի։

Իսկ յարգելի Տիկինը նոյն դպրոցի գոլութիւնը պահպանելու համար յատկացնում է 4000 ռուբլի, որ ապահովացրուում է Եղիշ. Թումանեանց Թէհրանի առեարական տանը և որի եկամտով կառավարւում է Յօվնանեան դպրոցը։ \*)



\*) Տիկին վ. Քանանեանը նոր-Զուղուի «Գ. Քանանեան» և Կամակերտ գիւղի մասին մասին, ուղարկելով սեղմն-նատարարների ու կահ-կարոսիների ծախքիրը և նուիրելով զանազան իրեն-մաղական-լավագիր, երկրագունդ, թանկապին դրեր, հանգ. Վ. Քանանեանի, հ. Բաղրատ վարդապետի և իր մեծագիր պատկերը, մանկապատեղի նիւթեր-խաղալիքներ և այլն։



1900 թուին առաջնորդ Մաղաքիա եպս.  
Տէրունեանը Ա. Կատարինեան օրիորդաց զբա-  
րոցի հետ միասին ձեռնարկում է և մի Հոգեուոր գի-  
շերօթիկ գլորոց բանալ Ա.մենափրկչեան ո. վանքի ծո-  
ցումը, լատկապէս գիւղացի քահանայացու պատանի-  
ներին ձրիաբար կրօնական կրթութիւն տալու հա-  
մար: Այս իսկ նպատակով հանգանակում է մի հազար թու-  
մանաչափ գումար և իր ձեռնարկի մասին տեղեկագրում ո.  
Էջմիածին:

Հոգելուս Խրիմեան Հալլիկը խորհրդատարում է ի միջի  
ալոց և հետեւեալը.

«Երբ իբրև գիշերօթիկ բնույտունուին գեղադասոց մանուկ-  
ներ, անշուշտ քաղաքացւոց ազքատ մասն կամ դանուած  
որբերն ես պիտի ստիպուիք բնույտնել, որով երթալով կը  
ծանրաբեռնի գլորանոցի վիճակը և անհնարին կրգաւնայ շո-  
րունակել: Երդենք կարելի կրլինի որ գիւղացի աշակերտ-  
ներ քաղաքացւոց աներ պատասխարուին. գիւղացիք նոցա  
հաց և ուրիշ պարէններ հոգան. եթէ աջազի այս բան, յայն-  
ժամ գեղացիներէն աւելի աշակերտ կարելի է ընդունել:

Ես խորհուրդ կուտամ Ձեզ, որ այդ գլորանաց գիշերօ-  
թիկ չը լինի, վասն զի փարձասութեամբ գիտեմ թէ քանի  
գիտարին և ասմանելի է և բարոյապէս ևս օգտակար չէ:  
Դիտարութեան բոլոր հանշամանքներ ունաք է խելամտու-  
թեամբ կշռէք և ազա ձեռնարկէք ի գործ. յուշ առնեմ Ձեզ  
Աւետարանի նախահաշւոյն առակը թէ «այս այս սկսաւ  
ամնել և ոչ կարոց կատարելոց հաւագոյն ևս է գիւղացի  
աշակերտաց համար մասնաւոր լճարումներ անել և քաղաքի

մէջ գանուած համեստ և պարկեշտ ընտանեաց յանձնելի պահ, քանի թէ աւելի և ծախսելով զիշերօթիկի մէջ պահել . . . . . » :

Մազաքիտ եպիսկոպոսը իր հանգանակած հազար թուժան գումարը տպահովացնում է և Վանքի գումարը փակցնում «Հոգեոր զպրացի» առունով մի արձանագիր, պատգամում նման մի զպրոց բանալու յուսով, իսկ ինքը հեռանում նոր Զուղալից:

1901 թուին Յ.զգ. երկուու զպրոցների հոգաբարձութիւնը բարձր գառարանների աշակերտներին զրոի ազգեցութիւնից իսպառ հեռացնելու նպատակով, Յ.զգ. Կեդրանական զպրացի երկրորդ յարկի սենեակներումը բաց է անում 14 հոգուց բազիտացած մի զիշերօթիկ զպրոց, որ երկու տարի միայն տեսելուց յետոյ աշակերտների սակաւութեան պատճառով փակւում է:

1907 թուին Հոգեոր Իշխանութիւնը Յ.զգ. երկուու զըպրացների Հոգաբարձութեան հետ միասին Մազաքիտ եպիսկոպոսի հանգանակած և տպահովացրած գումարի տոկոսները միացնելով Մանուկ Յորգանանեանի նոյն նպատակով նախապէս կատակած դրամագլուխի տոկոսին, որոշում է բաց անել Հոգեոր զիշերօթիկ զպրոց, բացառապէս զաւառներին զարգացած քահանաներ և ուսուցիչներ տալու դիտաւորութեամբ:

Սակայն, որովհետեւ Վանքումը յարմարաւոր շենք չկար, ուստի նոյն Հոգեոր զիշերօթիկ զպրոցը զետեղւում է Յ.զգ. Կեդր. դպրոցի երկրորդ յարկումը, ուր մի անգամ ևս զիշերօթիկ զպրացի փորձ եղել էր արդէն բարձր գասարանների աշակերտութեան համար: Այսպէս 1907 թուին 20

Հոգուց բազկացած գաւառացի աշակերտների համար բաց-  
ւում է դպրոցը, որ և տակաւին շարուն ակւում է:

Բատաւիալի Հայ ազգային հաստատութեանց վարչու-  
թիւնը սկզբանքային տեսակէտից գէմ լինելով գտւառացի  
աշակերտների գիշերօթիկ պահելուն, և ցանցանալով հանգ.  
Մանուկ Յայգանանեանի կտակը տառայի կերպով գործա-  
զըրուած տեսնել — ալն է, անենալ մի դպրոց, ուր կրթուին  
միայն այնպիսիներ «որսեք արդեն աւարտել են դպրացական  
կեանքն և փափագ են յուրանում հոգեսրական ուսուում ստո-  
ւալու և քահանալ գտանալու համար», 1913 թուից անորոշ  
ժամանակով գտարեցնում է յիշեալ բարերարի կտակած  
գումարի տոկսների առաքումը: \*)

Առաջնորդ Սահակ արքեպիսո. Ալյատեանը Հոգեսր գըպ-  
րացի անունով եղած գումարներով վազօրօք Խօյգան և  
Քոլորան Հայ գիշերից մի մասն գնած լինելով, Հոգեսր Իշ-  
խանութիւնը հնարաւորութիւն է ունենաւ յիշեալ կու-  
ռաւածքներից գուրացած արդիւնքով գեռ ալահպանել Գիշերօթիկ  
դպրացի գոլութիւնը, առհմանաի ոլ թւալ աշակերտներ  
ընդունելով, միջաց ունեցողներից մասնաւոր ծախք վեր-  
ցընելով և դպրացը փոխադրելով ո. Ամենափրկչեան վանքը:

Հեղկարնոկ հարաւատ Նոր-Զուզյեցիները ի գէմս պա-  
րսկաք Ոէթ Պօղոսեանի և Պետրոս Կրէտեանի, վերջերս  
ցանկաւթիւն են յալտանել և բանակցութեան մէջ են, ինչինչ  
պայմաններավ իրենց հալքենքի՝ Նոր-Զուզյի Ազգ. երկու  
դպրացներին յատկացնել մի պատկառելի գումար, որով հնա-  
րաւոր լինի Ազգ. Կեդրսական դպրոցյն ամբողջովին գիշե-  
րօթիկ գտրձնելու:

\*) «Տեղեկագիր Վարչ. Հայ ազգ. հաստատութեանց Բանահար» 1912 թ. Էջ 124



1905 թուին Ազգ. երկուեա զբարցների Հագարտրձութիւնը նկատելով որ Նոր-Զուղարի պէս մի տեղում չկան ալնպիսի շահաւետ գործեր, որոնցով կարելի լինի ապրուստ հայժամանիթել որոշում է հիմնել մի կանոնաւոր «Արհեստագիտական գլուխոց», որանք հնարաւոր լինի զանազան անհրաժեշտ արհեստներ սովորեցնել կատարելագործուած ձեռվ և ալգոլիսով ժողովրդի տնտեսական քայլայւած գիճակը որոշ շափով բարուքել:

Երբե զործի սկզբնաւորութիւնն, Ազգ Աեզրանական դըպրոցում բանում է Կօշկակարանոց, վարձում է մի վարպետ կօշկակար և արտաստհմանից բերել է տալիս անհրաժեշտ գործիքներ ու նիւթեր: Նախնական ծախքերը և արհեստաւորի ուսումնիկը հազարու համար՝ սրոշում է ամսական նպաստներ ստանալ Նոր-Զուղարի եկեղեցիներից ու Ազգ. հաստատութիւններից: Բանում է նաև մի կազմատուն: \*)

---

Կալկաթալի «Արգար և Ընկ.» անդամներ՝ պարսնալք Յարութիւն Գր. Արգարեանց և Արգար Ալէքս. Արգարեանց ի նկատի անենալով այն հանգամանքը, որ Նոր-Զուղարի տղաների մեջ մասը իրենց ընտագաւառում գործ ու աշխա-

\*) «Տեսակ, և կրթ. ակդեկադիք» 1905—1906 թ. էջ 24:

տանք չը գտնելուն պատճառով, հնաւանդ սովորութեան համաձայն միշտ գաղթում են Հնդկաստան, մտածում են Նոր-Զուզայի պատանիներին պիտանի արհեստներով կապել իրենց ծննդավայրի հետ, որով և օտարների հետ ձուլուելու առաջն առնել։\*)

Սու իսկ նպատակով 1906 թուին իրենց նոխահօր հաստատեց «Նոր-Զուզայի Հայկեան Հայրենասիրական գպրոցին» (էջ 10) լոտկացրուած գրամմագլխի վրայ նոր նպաստ աւելացնելով՝ 37,000 ռուփի են կտակում և Նոր-Զուզայի Ազգ. Կեդրանական գպրոցում մի Արհեստագիտական բաժանմունք բաց անում, անուանելով նրան «Նոր Հայկեան Հայրենասիրական ձիի արհեստագիտական գպրոց»։

Սոյն գումարի տոկոսներով նախ ընդարձակւում են Կօշկակարանոցն ու Կազմատունը, տպա բացւում Զուլչականոցի, Երկաթագործարանի և Խառատանոցի բաժանմունքները Կազմատունն ու Խառատանոցը հետզհետէ փակւում են աշակերտ ջունենալու պատճառով, յետոյ փակւում է Երկաթագործարանն՝ գարձեալ նոյն պատճառով։ Իսկ Կօշկակարանոցն ու Զուլչականոցը տարե-ցտարի ճսիանում են, աշտկերտներ տրտագլում և յուսալից տրտագլոյ խոստանում։



Բացի «Արհեստագիտական Գպրոց»-ից, Արգար և Ընկերութիւնը ասլահովում է նաև երկու ֆօնդ «Ողորմութեան Աւանդ» անունով՝ հանդ. Սէթ, Յարութիւն և Գրիգոր Օքադարեանցների յիշատակին, որոնց տոկոսներով տարեկան

\*) «Նոր-Զուզայի Լըտքել» 1906 թ. № 10.

500 թումանաչափ մի դումար է բաժանւում Նոր-Զուզակի աղքատներին: \*)

Ինչպէս որ «Քառասնից Մանկանց» տօնին ս. Կատարինեան կուսանաց վանքում հանգ. Մանուկ Յորդանանեանի լիշտակին և «Ա. Գէորգայ զօրավարի» տօնին՝ ս. Գէորգ եկեղեցում հանգ. Գէորգ Քանանեանի լիշտակին, Խոյնակէս և «Աբգարու Հայոց անդրանիկ թագաւորի» տօնին՝ ս. Աստուծածածնի եկեղեցում Աբգարեանց ննջեցեալների լիշտակին պատրագ է մատուցւում, քարոզ խօսւում և հոգեհանգիստ կատարւում ի ներկայութեան Քահանալական դասի, Ազգ. երկսեռ դպրոցների աշակերտութեան և ուսուցչական խմբի:



\*) Կէս դարից տեկի Կալկաթայի Արքարեանց առևտրական տան ներկայացնուցիչները Նոր-Զուզայի Ազգ. դպրոցներին, հիւանդանոցներին, եկեղեցուն, ազգականներին, ադրատներին և առ հասարակ բոլոր դիմոզներին տասնեակ հազարներ են նպաստել և նպաստում սակայն պէտք է նկատել, որ իրենց տնունով մի առանձին հաստառութիւն տակաւին գոյութիւն չաւնի, որով Երգարեան անունը Քանանեան և Պօղոսիսնեան անունների պէս յաւէքթանայ Նոր-Զուզայում: Ցանկալի է որ այդ պակասն լրացրուի և որ և է նպաստակով մի պատկառելի հաստառութիւն և աւելանայ Նոր-Զուզայում «Աբգարեան» անունով:

Փ.



1889 թուից սկսած «Քրիտանական և Արտաքին Աստուածաշնչի ընկերութիւնը» Նոր-Զուղարշմ բաց է առում մի ճիխ գրավաճառանոց, Հարաւային Պարսկաստանին Սուրբ-Գիրք մատոկարարելու նպատակով հաստատուած։ \*)

Ենորհին սոյն Գրավաճառանոցի, Սփահանի նահանգի ամենաշեռաւար գաւառներում ու խուլ տնկիւններում անգամ տարածուած է ալսօր Աստուածաշնչն, Սաղմոն և Աւետարանը, գլխաւորապէս Հայերէն ու Պարսկերէն լեզուներով։



Մինչև 1893 թիւը Նոր-Զուղարի Սզգ. երկոեա դըպրոցները ոչ միայն ուսումն էին ձրի աւանդում աշակերտաշակերտուհիներին, այլ բոլոր գասագրքերն ևս ձրի մատոկարարում։ Գիրք գնելու մասին ոչ ոք գւզափար չունէր։

Առաջնորդ Եսոյի արք-եպս, Աստուածատրեանը փորձում է Կեդրոնական գալրոցի դասագրքեր պարունակող սենեակը դարձնել Գրավաճառանոցի և առաջին անգամ լույտարարում է, որ այսուհետեւ աշակերտաշակերտուհիները պարտաւոր են իրենց հարկաւոր գասագրքերը փողով գնել։

Դասագիրք գնելու սովորութիւնը հետզհետէ ընդու-


\*) 1878—1889 թիւը նոյնպէս յիշեալ ընկերութիւնը գոյութիւն է ունենաւմ նոր Զուղարշմ, սակայն չի ունենում առանձին գրավաճառանոց։

նելութիւն գտնելուց յետով, նոյն դպրոցի դրան կից սե-  
նեակները նորոգելով յատկացնում է առանձին Գրավաճա-  
ռանոցի, դպրոցի անուամբը կոչելով «Կեդրանական»:

Տեղի անյարմարութեան և անձկութեան պատճառով  
1905 թուին Կեդրոնական գրավաճառանոցը տեղափոխում  
է նոյն նպատակով շինուած Գ. Բանանեան դպրոցի դրան  
յարակից ընդարձակ խանութը, սակայն բանուկ փողոցի վրայ  
շինելով՝ այստեղ ևս անյարմարութիւններ են ստեղծւում  
առևտրական տեսակէտից:

1908 թուին Սնգլ. Փոխհիւպատոս Գլ. Մ. Ս. Պ. Ա.  
զանուրը ի լիշտակ իր վաղամեռիկ քրոջ՝ տ. Լուիզա Ս.  
Դաւիթիսնեանցի, Կեդրոնական դպրոցի հիւսիսալին կող-  
ծում փողոցի վրայ կառաւցանում է մի երկարկանի շինու-  
թիւն, որի առաջին յարկը յատկացրում է Կօշկակարանոցին,  
իսկ երկրորդ յարկը՝ Կանանց Բարեգործ. ընկ. Ա. Հեստանոց-  
խանութին և Կեդրոնական Գրավաճառանոցին:

Այսպէս, հետզհետէ ժամանակի պահանջների համաձայն  
ճոխացած և ընդարձակուած Նոր-Զուղայի Ա.զգ. Կեդրոնական  
Գրավաճառանոցը՝ բացի նորանոր հրատարակութիւններ  
հասարակութեան զանազան խաւերում տարածելու ծառա-  
յութիւնց, մեծ դիւրութիւն է ընծայում թէ տեղական և  
թէ գիւղական դպրոցներին, նրանց անհըաժեշտ դասագըր-  
քեր և ուսման զանազան պիտույքներ մատակարարելով:



## ԱԽՆ Է 2 ՎԻԾՆ

Պահեստը՝ Ե. — Զուշայի Ուժ. Կերպարախան Գյուղաճնառանցը՝

### Պատրաս են ապագրութեան

1.) ՆՈՐ-ԶՈՒՂԱՑԻ Ո. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔԸ.—Պատմական տեսութիւն, Տնտեսական վիճակ, Եկեղեցի, Թեմակալ Առաջնորդներ, Առաջնորդական Խորհրդարան, Տպարան, Հրաշրութիւն, Մատենադարան ևայլն. — Պատմեալութ.

2.) ՆՈՐ—ԶՈՒՂԱՑԻ ԱՆԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Ժողովածու Ե. — Ջուղայում դործաւող աւելի քան 700 առածների, 100 օրէնութիւնների, 100 անէծքների, 800 դարձուածների և 600 բառերի. — Տեղական բարբառով եւ բառերի բացացութեամբ:

3.) ՆՈՐ—ԶՈՒՂԱՑԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՐՔ ԵՒ ՀԱՒԱՏՔ. — Ազգագրական ժողովածու Նոր-Ջուղայի զանազան ծէսների, սովորութիւնների, հաւատալիքների, սնոտիապաշտութիւնների, նախապաշտարմուկների և այլն և այլն: